


7810



Սոցականիակ, կուսակցութիւն.

No 3

Կունք կը խլես քո իրաւունքը

v. *skrskrbili.*

ԵՐԱՆ ԱԹԱՓԵԿԵԱՆ

Հրատարակութիւն
Սոց.-յեղափ. կուսակց. Բագրի կազմով կերպութ.

100

qJnC 50 uOq.

卷之三

Բ Ա Գ Ա Խ
Տպագութեան և Ա. Ա. Երեմիաց համախ
1918

4631

Սոց.-յեղափոխակ. կուսակցութիւն

№ 3

Կուսակցութիւնը

18/0

Ն. ՏԵՐԵՅԵԱՆ

ԼԵՒՈՆ = ԱԹԱԲԵԿԵԱՆԸ

Հրատարակութիւն
Սոց.-յեղափ. կուսակց., Բագրի կողմակերպութ.

Գիշը 50 ԿՈՊ.



Բ. Ա. Գ. Ռ. Ի.
Տպարան Ն. Ա. Ելեւանցեանի
1918



ԼԵՒՈՆ ԱԹԱԲԷԿԵԱՆԸ

Պատերազմական դէպքերը, յիշափոխական երևոյթները, որոնցով այժմ ապրում է ամբողջ հասարակութիւնը, այնքան են մեծ և ցնցող, այնքան են արագօրէն յաջորդում իրար, որ ընկ. Աթաբէկեանի մահը, որը սովորական պայմաններում հասարակութեան ուշադրութեան առարկան կը լինէր երկար ժամանակ և խոր տպաւորութիւն կը գործէր ամենքի վրայ, այժմ թէն ուժեղ, բայց կարճատե աղդեցութիւն գործեց միայն և, կարծես, մոռացւեց իսկոյն:

Այստեղ արդարանում է այն հոգեբանական օրէնքը, *) որի համաձայն, որպէսզի մի որոշ դէպք զգալի լինի, նա այնքան աւելի մեծ պիտի լինի, որքան աւելի մեծ են նրանից առաջ եղած դէպքերը և ընդհակառակն, այնքան աւելի փոքր պիտի լինի, որքան աւելի փոքր են նախընթաց դէպքերը: Ահա ինչու նայած շրջապատում կատարող անցուզարձին, միենոյն դէպքը կամ ուժեղ կերպով է զգացւում կամ թոյլ, կամ բարորովին չի զգացւում:

Թնդանօթաձգութեան ժամանակ հըրացանաձգութիւնը աւելի թոյլ տպաւորութիւն է թողնում, քան այն ժա-

*) Այդ օրէնքը կոչում է Վերելի և Ֆելիների օրէնք:

մանակ, երբ նա առանձին է լուսում:
Մի հրացանի ձայնը, որ խաղաղ ժա-
մանակները կը ցնցէր ամենքին, այժմ
համարեան ոչ մի ազդեցութիւն չի ա-
նում հասարակութեան վրայ, որովհե-
տեւ նրանից առաջ աւելի ցնցող գէպ-
քիրի է նա անանատես եղել:

Բնական է, որ արդի քաղաքացիա-
կան պատերազմը, իրար արագօրէն
յաջորդող գէպքերը, ոչ մի հարաւո-
րութիւն չեն տալիս մեզ, ոչ մի ժամա-
նակ չեն թողնում, որպէսզի մեր միտ-
քը փոքր ինչ կանգ առնի ամեն մի
գէպքի վրայ և իրեն հաշիւ տայ կա-
տարւածի մասին:

Այդ գէպքերի շարքին է պատկա-
նում և կ. Աթարէկեանի մահը:
Երբ հաստատեն աւելի նորմալ պայ-
մաններ, հայ ժողովուրդը աւելի ման-
րամասնօրէն կը հետաքրքրւի իր լա-
ւագոյն զաւակներից մէկի կեանքով
և արժանաւոր կերպով կը գնահատի
նրա արած ըոլոր ծառայութիւնները:
Լևոն Աթարէկեանի մասին կը գրւեն
և կը խօսւեն յետազայում աւելի ման-
րամասնօրէն: Մինչ այդ մենք անհրա-
ժեշտութիւն և պահանջ ենք զգում
այժմ, թէկուզ ընդհանուր զծերալ մի-
այն, տալ նրա պատկերը և պարզել
այն խոշոր գերը, որ նա կատարել է
մեր մէջ: Եւ մենք կաշխատենք այդ
անել, որքան որ հնարաւոր է այդ
ներկայ պայմաններում:

I

կ. Աթարակեանը ամենից առաջ սո-
ցիալիստ էր, հայկական սոցիալիզմի
հիմնադիրներից մէկը և հայ սոցիալիս-
տական շարժման թերես ամենափայ-
լուն ներկայացուցիչը և գաղափարա-
խոսը:

Իբր այդպիսին նա հանդէս եկաւ
1904-6 թւին:

Որպէսզի աւելի պարզ կերպով կա-
րողանանք պատկերացնել նրա գէմ-
քը, անհրաժեշտ է նաև և առաջ մի
քանի խօսքով յիշատակել այն միջա-
վայրի մասին, ուր նա հրապարակ ե-
կաւ և գործեց:

Այդ միջավայրը հայկական դժնդակ
իրականութիւնն էր: Իսկ թիւ էր ներ-
կայացնում նա այդ ժամանակ: Եւ որ
զիսաւորն է, որմնք էին տիրող հո-
սանքները այդ իրականութեան մէջ:

Տիրող հօսանքներն էին այդ ժամա-
նակ հայկական բուրժուական լիբերա-
լիզմը յանձինս մշակականութեան և
Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Դաշնակցութեան նպատակը չի ե-
ղել մասնակից լինել Ռուսաստանի յե-
ղափոխական շարժումներին: Նրա նը-
պատակները սահմանից այն կողմն էին
տարածում տաճկահայտառանի վրայ:
Տաճկահայերի ազատազրութիւնն էր նը-
րա նպատակը: Եւ այդ նպատակին հաս-
նելու համար նա զիմում էր զանազան
միջոցների: պրոպագանդ էր մզում

Եւրոպայում յօդուտ հայկական դատի,
իսկ Տաճկաստանում կազմակերպում
էր ցոյցեր և ապստամբութիւններ, ո-
րոնք պէտք է եւրոպական պետու-
թիւնների ուշադրութիւնը գրաւէին և
պիտի ստիլիզին նրանց միջամտելու
և ազատագրելու Տաճկահայ ժողովուր-
դը:

Մշակականութիւնը դաշնակցու-
թեան ուստական լեզար մասնաճիւղն
էր, մեղալի միւս կողմը: Դրանով է
բացարում, որ շատ յայտնի մշակա-
կաններ արտասահմանում գործում էին
իրրե դաշնակցականներ՝ պրոպագանդ
մղելով հայկական հարցի շուրջը, մաս-
նակցելով զանազան կօնզրեանների և
այլն, իսկ նուստատանում դառնում
էին մշակական և քարոզում չափաւոր
լիրերալիզմ: (Մի կողմն ենք թողնում
երկրորդական ուղղութիւնները):

Փաստօրէն կարելի է ասել՝ մի քաղա-
քական հոսանք կար այդ ժամանակ
մինչև 1900-3 թւակ, նուստահայերի
մէջ, մի քաղաքական շարժում, այն է՝
շարժում յօդուտ տաճկահայերի ազա-
տագրութեան:

«Փողովուրզը ծծում էր Գ. Քաթի-
պայի «ազատ երգերը», Բաֆֆու վէ-
տելերը, նրա Զալալ էդինը, Խէնթը,
Կայձերը, Կովկասեան գաղտնի թեր-
թիկները, Արմենիան, Հնչակը, ուստ-
անողութեան անգնահատելի հրատարա-
կութիւնները: «Հաջիդիմիարի և Ստե-
փան եարաջայ», «Մարկաւագ Լեսկի»,

«Դանչօ», «Բուլղար աւազակապետ» և
այլ մանր 2-3 կողէկանոց բրօշիւբնե-
րը, լի ազատասիրական ոգով, որոնք
հազ ազներով տարածւում էին թէ Կով-
կասում, թէ սահմանից այն կողմը—
Վանում, էրզրումում, Մուշում*):

Ռուսակայ հասարակութիւնը ապրում
էր րումանակի հայրենասիրական իր շըր-
ջանը: Եւ այն շարժումը, որի վլուս էր
կանգնած Դաշնակցութիւնը մի ապա-
զատակարգային շարժում էր, որի մէջ
սոցիալիստական ոչինչ չը կար և չէր
ել կարող լինել տւեալ պատմական
պայմաններում, մանաւանդ Տաճկաս-
տանում: Ահա ինչու Հնչակիան կու-
սակցութիւնը, որ հիմնւել էր 1887 թ.
և ընդունել էր նոյնիսկ սոցիալգեմո-
կրատական ծրագիր, փաստօրէն, հայ
իրակնութեան մէջ վերածւեց ազգա-
յին կուսակցութեան և իր գործունէ-
ութեամբ ոչնչով չէր տարբերում Դաշ-
նակցութիւնից, որը հիմնւեց 1890 թ.
և աւելի խելացի կերպով ակնարկում
էր միայն իր ծրագրի մէջ սոցիալիզ-
մի մասին և զնում աւելի գործնական
խնդիրներ:

Այսպէս ուրեմն մինչև այդ մենք
գործ ունէինք մի շարժման հետ, որ
կըում էր ընդհանուր ազգային բնոյթ,
և բոլոր գասակարգերին էլ հարազատ
կարող էր համարւել: Սոցիալիստական

*) Այս խօսքերը պատկանում են Դաշնակ-
ցական հաժակին, որ բերում ենք „Վերագնու-
հատումներից“ երես 103:

շարժում և սոցիալիզմ, իբրև մի մտաւոր հոսանք գոյութիւն չուներ, թէ նէ Հնչակեան և թէ Դաշնակցական կուսակցութիւնների հիմնադիրները սոցիալիզմին յարողներ էին:

II

Սոցիալիստական շարժման առաջին նշանները սկսում են երկար ժուտահայերի մէջ՝ 1901 թիւն, Բագւում, երբ դաշնակցական երիտասարդների շրջանում հարց է բարձրացրում «Կովկասիան գործունէութեան» մասին:

1901 թիւն մի բանի դաշնակցական բանութիւններ մի թոռոցիկ երատարակեցին, որանու կոչ էր արւում սկսել Կովկասիան գործունէութիւն։ Դաշնակցութեան կենտրոնական կոմիտէն երիտասարդների այդ «յիմարութեան» մասին լսել անգամ չէր ուզում, իհարկէ։ Թոռոցիկներից մի քանի հատ են միայն առածում։ Մնացածը, ընկնելով կոմիտէի անդամների մօտ, պատահաբար, ինչպէս պատմում են, այրում է վառարանում։

Ենտապայում կովկասիան գործունէութեան գաղափարը աւելի և աւելի է տարածում և մի քանի դաշնակցականներ 1903 թ. դուրս են գալիս կուսակցութիւնից և հիմնում Սոց.դիմ. բանութական հայ կազմակերպութիւնը։

Բայց, գմբռների թիւը Դաշնակցութեան մէջ քանի զնում աւելի և աւելի էր աճում։ Եւ Դաշնակցութիւնը 1903

թիւն իր երկրորդ սայնական ժողովում որոշում էնկամել Կովկասիան գործունէութիւնը, պատճառաբանելով, որ հակառակ գէպքում մասսաները, այսինքն բանութական մասսաները, ձեռքից կը գնան։

Առիթն էլ չի պակասում Կովկասում գործելու համար։ Նոյն 1903 թւակ, ամառը, յունիսի 12-ին, երատարակելում է ուսւ կառավարութեան չարաբաստիկ ուկազը հկեղեցական կալվածների առման մասին։ Եւ Դաշնակցութիւնը, որ մինչ այդ պասիւ դիրք էր բռնել դէպի ուսւ կառավարութիւնը և բաւականանում էր կուտուրական պայքարով միայն ուսւացման բազաքականութեան գէմ, սկսում է իր Կովկասիան գործունէութեան սկսիւ շրջանը թիւակութել կազմակերպելով՝ ամենութե եկեղեցական կալվածների խման գէմ ցոյցեր և գիմազրութիւններ։

Այս գէպքերի ընթացքում դաշնակցական բանութեան համար աւելի ևս պարզում է այդ կուսակցութեան մէջ տիրող բորժուական տարրերի հակասոցիալիստական և հակարանութական գէմքը։ Բանութեան այդ տեսակ գործունէութիւն չէր սպասում կովկասում։ Նա ձգում էր զլիաւորապէս աշխատաւորական—զասակարգային, սոցիալիստական գործունէութեան։ Ահա ինչու կուսակցութեան մէջ կատարող խուլ պայքարը կալվածական գէպքերից յետոյ աւելի է սա-

ստականում, և պատրաստ էր արդէն բանկելու, երբ վրայ հն հասնում հայ թրքական ընդհարումները և երբ ընդհանուր վտանգի հանդէպ ամենքը, առանց գասակարգի խորութեան, միանում են Դաշնակցութեան գրօշակի տակ: Դաշնակցութիւնը գառնում է մի խոկական կառավարութիւն, որ բոնում է հայ ժողովուրդին բօյկօտի ենթարկած ուրս կառավարութեան տեղը՝ իր զատարանով և բանտով, հարկահանութեամբ և գործով:

Ընդհարումները վերջանում են: Դաշնակցական ինտելիգենցիան, օգտական այն դիրքից և ազդեցութիւնից, որ նա ունէր, ձգտում է իր ձեռքը վերցնել հայկական կրթական հիմնարկութիւնները, զվաճարապէս դպրոցը, որը գտնում էր մինչև այդ մշակականների, այսինքն հայ բուրժուական լիբերալիզմի ձեռքը: Դաշնակցական և մշակական ինտելիգենցիայի միջև տեղի է ունենում պայքար, յաղթում է Դ. Ն. Շ. այգափսով մշակական ինտելիգենցիան զառնում է Դ. Կ. առ օպպոզիցիա:

Մինոյն ժամանակ Դաշնակցութեան մէջ նորից սկսում է գասակարգային գաղափարի շուրջը ժամանակաւոր կերպով կանգ ասած պայքարը: Իրեւ համազգային կազմակերպութիւննա միացրել էր իր մէջ ըուր գասակարգերը նախ տաճկահայ գատի շուրջը, ապա Կովկասեան ազգային ինքնարդարականութեան գործի շուրջը: Էւ առաջ, երբ

ինքնարդարականութեան կարիքը վերանում է, նրա մէջ եղող հակադիր սոցիալական տարրերի մէջ վերսկսում է պայքարը: Նրա աջ թեր, տաճկահայերը և բուրժուական տարրերը կտրուկ կերպով պահանջում էին կուսակցութիւնից շարունակել իր սկզբանական, այն է տաճկահայ աղատագրական գործը միայն: Զախ թերբանուրութիւնը, նոյնքան կտրուկ կերպով պահանջում էր սոցիալիստական, գասակարգային գործունէութիւն: Իսկ կհնարունը կամենում էր հաշտեցնել երկուսին էլ, պահպանելու համար կուսակցութեան ամբողջութիւնը: Հետաքրքրական է այդ տեսակէտից այն, որ երբ Դաշնակցութեան ձախակողմնան թեր 1906 թւի ամառը իր պահանջն էր գրել Դաշնակցութեան օրգան «Ալիքը» ամբողջովին ներկաւած էր բանուրական հարցին, պրոֆեսիօնալ միութիւններին և այլն, իսկ երբ նոյն կուսակցութեան բուրժուական տարրերը և տաճկահայերը իրենց գծզոհութիւնը ցոյց տվին Դաշնակցութեան սոցիալիստական գործունէութիւնն է, նոյն կուսակցութեան օրգան «Երկիր» թերթը («Ալիքը» փակւել էր) իր համարները սկսում է ներկել համարեա ամբողջովին տաճկահայ զատին:

Իր մէջ պարունակւող բոլոր հակադիր տարրերին բաւարարելու համար նա իւր ծրագիրը լրացնում է

սոցիալիզմով (1905 թւի նախագիծը, որ հաստատում է 1907 թւին կուսակցական համագումարում):

Այդ ժամանակ է ահա, որ սոցիալիստորէն մտածող ինտելիգենցիան և բանտորութիւնը որոշում են անջատուել Դաշնակցութիւնից և 1906 թւի աշնան, երբ «Երկիրը» ի հաճութիւն հակասոցիալիստական, բուրժուական տարրերի տաճկահայ դատով էր զբաղւած և արձրունեան լիբերալիզմով, հիմք է դրւում հայ սոցիալիստ-յեղափոխական կազմակերպութեան:

Այժմ արդէն մի խումբ մարդիկ չեին գուրս եկողները, այլ մի ամբողջ հոսանք, մի թարս սոցիալիստական շարժում: Դաշնակցութեան մէջ այնուամենայնիւ մնաց բանտորութեան միւս մասը, որ իրեն բաւարարւած էր ըգգում Դաշնակցական «սոցիալիստական» ծրագրով, որովհետև այդ ծրագիրը հաշաեցնում էր ազգային տաճկահայ դատը, Կովկասեան դաստկարգային աշխատաւորական դատի հետ Երիտասարդ, իր սոցիալիստական համագումարի մէջ դեռևս չամրացած բանտորութեան այդ մասը մնաց կուսակցութեան մէջ: Մնացին և մի շարք ձախակողմեան ինտելիգենտներ, նպատակ ունենալով կազմակերպութեան ներսում սոցիալիզմը տարածել, օգտեւելով, ինչպէս իրենք էին ասում, այն «հմայքից», որ նա ունիր մասսաների մէջ: Այսպիսով, ուշ

թեմն, անջատողները եղան ամենից ըմբռուտ, ամենից նետեղական և գիտակից տարրերը:

Այս սոցիալիստական շարժումն է ահա, որ նախ Դաշնակցութեան ներսում, ապա Դաշ-ից դուրս՝ անջատւելուց յետոյ, ի գէմս Լևոն Աթարէկեանի ունեցաւ իր գաղափարների և ձգումների լաւագոյն և տաղանդաւոր արտայայտիչը, հայկական երիտասարդ սոցիալիզմի ուժեղ պաշտպանը:

III

Այս թուոցիկ նկատողութիւնից յետոյ հայ հասարակական կեանքի մասին մինչև 1905—6 թւականը, կարող ենք ծանօթանալ այժմ Լևոնի դաւանած գաղափարների և հայեացքների հետ ըստ հնարաւորին հէնց իր խօսքերով:

Որմնք էին այդ գաղափարները. Բնչի մէջ էր կայանում նրա սոցիալիզմի ըմբռումը, Կմը արդեօք որևէ է տարրերութիւն Լևոն Աթարէկեանի սոցիալիզմի և դաշնակցական սոցիալիզմի միջև. թէ այսպէս կոչւող երիտասարդ դաշնակցականների կամ անջատականների շարժումը մի արհետականորէն սարքած գործ էր, նրա փառասիրութեան հետևանքը, ինչպէս չէր քաշում ասել նրա գաղնակցական հակառակորդներից մէկը (Վահէն), ինչպէս էր նա նայում հայ կեանքի խօշոր երևոյթների և ինպիր-

ների վրայ, տաճկահայ դատի և աղբային քաղաքաքականութեան վրայ, Դաշնակցութեան, իրեն կուսակցութեան վրայ և հայ ժողովրդի վրայ, Պատասխանել այս բոլոր հարցերին, նշանակում է միաժամանակ և պարզել հայ սոցիալ-յեղափոխական շարժման էռութիւնը:

Մենք կանգ չենք առնի Լ. Աթարեկեանի աշխարհահայեցքի վրայ, կը բաւականանանք միայն յիշատակելով, որ նա դաւանում էր սոցիալ-յեղափոխական, ոչ աշխատական, սուրբեկութիւն սոցիօգիտական աշխարհահայեցքը: Նա իրեն աշակերտ էր համարում և՛ Մարքուի և՛ Էնգելսի և՛ Միխայլովսկու և՛ Լավրովի: Նրա դաւանած վարդապետութիւնը օրթօգոքսալ տառապաշտ մարքսիզմը էր, և ոչ էլ օրթօգոքսալ Միխայլովսկիզմը կամ Լուրիզմը, եթէ կարելի է այսուհետ արտայայտել: Նա մի միայն սոցիալիզմը էր ճանաչում, գիտական սոցիալիզմն էր դա, որի մէջ բոլոր սոցիալիստ գիտնականներն ու մուածողներն էլ կարող էին մաս ունենալ:

Են ահա Լ. Աթարեկեանը հայ սոցիալիստական շարժման գլուխ անցնելով մի առանձին թափով, մի անհման ոգկորութեամբ սկսում է ծառայել սոցիալիզմի տարածման մեծ և գժւարին գործին հայ իրականութեան մէջ: Բաննուրական շարժումը, ինչպէս տեսանք, գաշնակցութեան մէջ խույ

կերպով գոյութիւն ունէր դեռ շատ առաջ, 1900 թւականից սկսած: Լ. Աթարեկեանը և մի շարք ուրիշ սոցիալիստ ինտելիգենցիաներ տալիս են միայն արդ բանարութեան ձևոքը մաքուր սոցիալիստական զրօշակը և զինում են նրան գիտական սոցիալիզմի զէնքով, որքան որ թոյլ էին տալիս մեր իրականութեան ծանր պայմանները:

Ինքը, Աթարեկեանը, մեր հասարակական կեանքի բոլոր երեսյթներին, բոլոր խնդիրներին, իրեն քննադատ, իրեն հսկաօր, և իրեն հրապարակախօս մօտենում էր միշտ նոյն գառակարգային—աշխատաւորական, նոյն գիտաւան սոցիալիզմի տեսակետով:

Արդ՝ ինչի մէջ էր կայանում սոցիալիզմի էռութիւնը այսպէս, ինչպէս Լ. Աթարեկեանն էր ըստանում: Ինչպէջ էր նրա սոցիալիզմը տարրերում դաշնակցական սոցիալիզմից, որի զէմ նա անխնայ պայքար էր մլաւմ:

Բայց նախ քան այս հարցին պատահանելը, տեսնենք թէ ինչպէս էին ընրուում սոցիալիզմը գաշնակցութեան դեկարտիստը:

«Հ. Յաշնակցութիւնը—առուուծ է այդ կուսակցութեան 1907 թւի ծրագրում—իրեն յեղափոխական և սոցիալիստական կուսակցութիւն, ձգտում է պաշտպանել հայ աշխատաւոր մասսաների բովանդակ շահերը, թէ տնտեսական—գառակարգային, թէ մարդ-

կային—քաղաքական և թէ ազգային—
կուլտուրական»...

Իսկ Դաշնակցութեան թէօրիտիկոս-ներից մէկը (Վահէն) սոցիալիզմը որոշում է ինչպէս «ճնշւած, հարստահարւած և իրաւագուրկ դարձած մասսաների ազգային—կուլտուրական, ինչպէս նաև տնտեսական—դասակարգային շահերի» պաշտպանութիւնը: Եւ քանի որ ճնշւած, հարստահարւած են և թուրքահայ մասսաները Տաճկաստանում, ուստի և դաշնակցութիւնը, իրքև աշխատաւոր ժողովրդի սոցիալիստական կուսակցութիւն, «պէտք է պաշտպանէ նրան թէ Թիւրքաց Հայաստանում, թէ Կովկասում և թէ այլ վայրերում»:

Լ. Աթաբէկեանը գտնում է, որ սոցիլափամի այսպիսի ըմբռնումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ մեծ վարդապետութեան աղաւաղումը: Բացատրելով, որ ոչ ամին «ճնշւած, հարստահարւած և իրաւագուրկ մասսա» կարող է սոցիալիզմի օրինեկա լինել, որ մինչև կապիտալիզմն էլ եղել են այդպիսի մասսաներ, բայց որ սոցիալիստական շարժում և սոցիալիզմ չի եղել, նա այսպէս է քննադատում աշխատաւոր դաստիարգի շահերի բաժանումը գաղնականների կողմից երկու կամ երեք կաթեգորիի:

Ըստ դաշնակցական ըմբռնողութեան, այդ «դասակարգի» շահերը կրկնակի են, նախ ազգային-կուլտու-

րական, ապա տնտեսական-դասակարգային: Տարակոյս չկայ, որ «ճնշւածների, հարստահարւածների և իրաւագուրկների» շահերի այդպիսի կը-տըրտումը երկու տարբեր կաթեգորիների գործնական մեծ յարմարութիւն է ներկայացնում Դաշնակցութեան համար: Յենւելով այդ բաժանման վըրայ, նա կարող է միանգամից երկու քաղաքականութիւն վարել «կուլտուրական» խնդիրներում «ազգային», իսկ «տնտեսական» խնդիրներում «դասակարգային» և հարստահարւածներու թէ ամբողջ ազգը և թէ ճնշւածներին ու հալածածներին:

«Գիտական տեսակէտով սակայն մի հասարակական դասակարգի—լինի նա ճնշող, հալածող և իրաւատէր, թէ ճնշւած, հալածւած և իրաւագուրկ—շահերի բաժանումը ազգային կուլտուրականի և տնտեսական—դասակարգայինի չի դիմանում որևէ է քըննադատութեան, որովհետեւ իրաքանչիւր դասակարգի շահը մի անտարրալուծելի ամբողջութիւն է նոյնքան տնտեսական, որքան իրաւական, գեղագիտական, բարոյագիտական կողմերի և իբրև այդպիսին, նա հակագիր է ներհակ դասակարգի շահին, որը իր կողմից նորից մի բազմակողմանի և անտարրալուծելի ամբողջութիւն է ներկայացնում: Ճնշւածների, հալածածների և իրաւագուրկների դասա-

կարգային շահը համանիշ համարել ստուծուականն շահին և հակադրել այս վերջինը «էւուլտուրականին» կը նշանակէ սոցիալիստական դասակարգային կուրը զրկել ամեն մի իդէական բռվանդակութիւնից և սոցիալիզմը վերածելով ցինիական էկոնոմիզմի, աշխատաւորութեան ոգին («կուլտուրան») ծախիլ ձագգին», այսինքն՝ նրա հրամանատար դասակարգերին *).

Հետևապէս ոչ մի կասկած չի կարող լինել իսկական սոցիալիստի համար, որ աշխատաւոր դասակարգը իր տնտեսական շահի ապահովման հետ միասին, բնականօրէն ձգտում է և պիտի ձգտի ստեղծելու իր գառակարգային կուլտուրան, և բաժանել աշխատաւորութեան տնտեսական շահը նրա կուլտուրական դասակարգային շահից, — նշանակում է կոպիտ կորպով ազաւադի սոցիալիստական ուսմունքը:

Այնուհետև բերելով ուսւ սոցիալիստ-ցեղափոխական և Շիշկոի այն կարծիքը, որի համաձայն սոցիալիստական շարժումը ծնունդ է անում կապիտալիստական կարգի ծոցում» և «այդ շարժման հենց ծագումը կապւած է կապիտալիստական վուլֆ առաջացման հետ հասարակական դասգայման պրոցէսի մէջ», և Աթարէ նեանը զարգացնում է այդ թէզը և յանդում է ժամանակակից սոցիալիզմի ճիշտը մը բռնուզութեան:

Թոյլ ենք տալիս մեզ բերելու այս-

*) «Վերագնահատութեա» եր. 62:

տեղ նըա «Սոցիալիստական պրոբլեմներից» մի ցիտատ, որը թեկուղ երկար, բայց չափազանց հետաքրքրական է, որովհետեւ «չ միայն դրւած հարցի պատասխանն է պարունակում իր մէջ, այլ և կուռմ է իր վրայ և Աթարէ կեանի տաղանդի կնիքը»:

«Կապիտալիզմը — առում է նա — ինչպէս յայտնի է, աւելի է, քան մի առողջ արդիւնաբերելակերպ, Նա մի ամբողջ կուլտուրա է իր լուսաւոր և ստեղծային կողմերով; Գիտութեան, գեղարվեստի և արդիւնաբերութեան ամենաբարձր տեխնիկան դարձացել է կապիտալիստական կարգի ծոցում; Նա տեկի է մեզ զիտական ուսումնասիրութեան և գեղարվեստական ստեղծագործութեան ամենից նուրբ մէջողները; Նա մատչելի է գարձել մարդկային հետազօտութեան համար երկրի և երկնքի ամենից խորունկ խորքերը; Նա կուտակել և ձևափոխել է ոյժը և նիւթը և մարդկային աշխատանքը հասցեել է ծայրայեղ ներուժութեան և նրբութեան; Հեռաւոր վայրերը մօտեցել է իրար, արագացրել է համարակական կեանքի տեմպը; Ամենի մեջների շուրջը, վիթիարի գործարանների մէջ, լայնատարած պլանտացիաների վրայ նա համախմբել է բիւր հազարներով անմիջական արդիւնաբերուներ, վարժեցրել է նրանց հասարականօրէն աշխատելու, ապրելու և վայելելու; Բաժանելով ու միա-

ցնելով նա կանոնաւորել է միլիօնաւորների աշխատանքը և ամենից ետին արդիւնաբերութեան աշխատակից է գարձրել երկրագնդի բոլոր երկրաների բանւորներին; Նա տեղահան է արել ժողովրդական ահազին զանգւածներ և բերել կուտակել է նրանց կուլտուրական կենտրոններում: Նա ստեղծել է տնտեսական կացութեամբ և հոգեկան բովանդակութեամբ միատեսակների լեզիօններ, մացրել է նըրանց մէջ սեպհական ոյժի գիտակցութիւնը, սովորեցրել է նրանց մասսայօրէն գործել, մասսայօրէն յաղթել և պարտել: Նա ջախջախել է առեն մի նահապետականութիւն և ստեղծել է մի նոր ու փարթամ կուլտուրա, որի նըրանը մարդկային պատմութիւնը չի տեսել: Նա վերագնահատման է ենթարկել մարդկային հասարակութեան բոլոր մտաւոր և բարոյական արժէքները և քննական ոգի է մացրել աշխատաւոր մասսաների մէջ:

«Բայց նա և աւերել է:

«Գիւղատնտեսութեան այնքան կարեր ասպարէզում նա դանդաղեցրել է և շատ յաճախ անհնար է դարձրել տեխնիական առաջադիմութիւնը, ծծել է վաշխառուաբար հողի հիւթերը և ոչինչ է դարձրել նրան, նա խանգարել է աշխատանքի հասարակական ձևերի զարգացման երկրագործ աշխատաւորների մէջ: Կապիտալիստական կարգի երկու կարևոր ազդակները՝ ան-

ծայր շահամոլութիւնը, տեխնիկայի զարգացման հետ միասին, սեպհականացրկել են անմիջական արդիւնաբերողներին և առաջ են բերել մի չը տեսնւած մասսայական թշւառութիւն: Աշխատաւորի կացութիւնը կարցրել է իր կայունութիւնը: Ամեն ինչ դարձել է ծախու ապրանք, և տաղանդը, և մտաւոր ոյժը, բարոյականութիւնը, և գեղեցկութիւնը, և հասարակական հեղինակութիւնը:

«Այդ կապիտալիզմի ծոցում ծնւել է ժամանակակից սոցիալիզմը, և եթէ մենք վերլուծման ենթարկենք արդի սոցիալիստական մտածողութիւնը և շարժումը, մենք կը տեսնենք, որ նըրանք, լինելով հանդերձ մի սոսկ «ընակցիհա» կապիտալիզմի յոռի և քայլայիչ կողմերի դէմ, ձգտելով հանգերձ կապիտալիզմի յոռի և քայլայիչ կողմերի արմատական վերացման, պարփակում են իրենց մէջ նոյն կապիտալիզմի բոլոր գրական և ստեղծարար կողմերը: Սոցիալիստական միտքը իր մտապատկերների մի մեծ մասը քաղել է կապիտալիստական հասարակարգի ճոխ շտեմարանից և իր հասարակական իդէալի վսկմ շէնքը կառուցանելու համար օգտւել է մեծապէս կապիտալիզմի գրական տարերից:

«Այդ շէնքի անկիւնաքարերն են ոչ թէ հաւասարութեան, եղբայրութեան և արդարութեան վերացական

և բազմաթիւ մեկնութիւնների հնթակայ հասկացողութիւնները, այլ չափազանց շօշափելի բաներ՝ մի կողմից ծայրայեղ կատարելութեան հասցրած արդիւնաբերական, գիտական և գեղարվեստական տեխնիկան, միւս կողմից կանոնաւորած և իր արդիւնաբերութեան մէջ գերազոյն աստիճանի հասցրած ընկերակցական և հասարակական աշխատանքը:

«Եթէ սոցիալիզմը, իբրև հասարակական իդէալ, իւրացրել է կապիտալիստական կուլտուրայի ամբողջ պրոցեսիւ բովանդակութիւնը, նա, իբրև շարժում, իր ամենից խոր արմատներով կապւած է նոյն կապիտալիստական կուլտուրայի հետ:

«Սոցիալիստական շարժման կրողներ հանդիսանում են յաւելեալ արժէք արտադրողների այն խաւերը, որոնք կապիտալիստական հասարակակարգի շրջանակում արդէն արդիւնաբերում են ընկերակցօրէն, որոնք այլ կերպ արգիւնաբերելու անտեսական հնարաւորութիւնը չ'ունին, որոնց մէջ տիրում է ոչ միայն շահի միատեսակութիւն, այլ և անհատական չահերի փոխադարձ պայմանաւորում, որոնք մշակել են իրենց աշխատանքային նոր և ուրոյն իրաւահասկացողութեան գեթ հիմնական սկզբունքները, կարողացել են ստենծել մի շարք յատկապէս իրենց գոյութեան պայմաններին

և կուի պահանջներին ծառայող հիմնարկութիւններ:

«Այդպիսով, ժամանակակից սոցիալիզմը, թէ իբրև մտածողութիւն և թէ իբրև շարժում, արտայացտութիւնն է մի բարձր կուլտուրայի և կարող է մտասների մէջ խոր արմատներ ձգել միայն այն վայրերում, ուր գոյութիւն ունեն վերջնապէս զանազանաւորւած հասարակական խաւեր, ուր արդիւնաբերութիւնը կատարւում է ընկերակցօրէն և հասարակականօրէն, ուր տեխնիկան, գիտութիւնը և գեղարվեստը հասել են ամենաբարձր կատարելութեան: Մի խօսքով, սոցիալիզմը զառնում է աշխատաւոր մասսային հարազատ և նրա շարժումները զեկավարուող մի իդէալ միայն այն վայրերում, ուր գոյութիւն ունի ժամանակակից կուլտուրան, այսինքն կապիտալիզմը*»:

Ահա սոցիալիզմի կութիւնը, Լ.Աթաբէկիանը չի բաժանում աշխատաւորութեան տնտեսական շահերը կուլտուրականից և սոցիալիզմը ըմբռնում է ոչ միայն իբրև տնտեսական կութեակը, այլ և կուլտուրական հասկացողութիւն: Սոցիալիստական շնչքի անկիւնաբարերն են ոչ միայն ծայրայեղ կատարելութեան հասցրած արդիւնաբերական տեխնիկան, այլև գիտական և գեղարվեստական տեխնիկան: «Սոցիալիզմը, իբրև հասարակական իդէալ, իւրացրել է կապիտալիստական կուլտուրայի ամբողջ պրոցեսիւ բո-

վանդակութիւնը և իր մէջ պարփակում
է նաև նոր, ուրոյն աշխատաւորական
իրաւահայեցողութիւն, նոր բարոյա-
գիտութիւն, նոր և զուտ աշխատաւո-
րական հիմնարկութիւններ (արհես-
տակցական միութիւններ, կօօպերա-
տիւ ընկերութիւններ, ժողովրդական
տներ) և այլն։ Սոցիալիզմը մի ամբող-
ջական և բարձր կուլտուրա է։

Սոցիալիզմի այս գիտական ըմբռ-
նումից է ահա ենում Աթաքէկեանը,
երբ նա աշխատաւոր դասակարգի շա-
հերի կարտումը դաշնակցական զեկա-
վարների կողմից տնտեսական դասա-
կարգայինի և աղքային կուլտուրականի
համարում է սոցիալիզմի աղաւաղում։

IV

Եթէ այդպէս է, եթէ սոցիալիզմը
ծնունդ է առնում կապիտալիստական
կարգի ծոցում, եթէ սոցիալիզմը, իբ-
րև մասածողութիւն և իբրև շարժում
արտայայտութիւն է մի բարձր կուլ-
տուրայի, եթէ նա կարող է արմատ-
ներ ձգել միայն այն վայրերում, ուր
արդիւնաբերութիւնը, տեխնիկան, գի-
տութիւնը և գեղարւեսաը հասել են
ամենաբարձր կատարելութեան, ուր,
մի խօսքով, գոյութիւն ունի ժա-
մանակակից կուլտուրան, այսինքն
կապիտալիզմը, ապա ուրեմն հարց
է առաջ գալիս, «հնարաւո՞ր է
արդեօք սոցիալիստական կազ-

մակերպութիւնը նախակապիտալիս-
տական շրջանիաշխատաւոր գիւղացի-
թիւն մէջ» *) Հնարաւո՞ր է ոսցիա-
լիստական կազմակերպութիւն Տաճկա-
հայտատանում։ Պատասխանը պարզ էր,
պէտք է լինէր բացասական։ Իրենք
Դաշնակցութիւնն թէորիտիկոս (Մ.
Ցոհաննիսեան և այլն), չէին հերքում,
որ Տաճկահայտատանը մի երկիր է, ո-
րի մեծ մասը ապրում է գես ևս նա-
տուրալ տնտեսութիւն շրջանում։ Հե-
տևապէս սոցիալիստական շարժման
մասին այնտեղ խօսք լինել չէր կա-
րող և սոցիալիստական կազմակեր-
պութեան կարիքը ևս այնտեղ նոյն-
պէս չէր կարող լինել։ Մինչդեռ Կով-
կասում սոցիալիստական շարժման
օբիեկտիւ պայմանները արդէն գո-
յութիւն ունէին և սոցիալիստական
կուսակցութիւնն անհրաժեշտութիւնը
ևս զգացում էր ուժեղ կերպով, ինչ-
պէս տեսանք վերը։ Ահա ինչու 1905-6
թւական. հայ բանւորական շրջաննե-
րում ամենահրատապ հարցն էր տաճ-
կահայ դատի և սուսահայ աշխատա-
ւորի դասակարգային դատի անջատ-
ման հարցը։ Կարծդ էր արդեօք միե-
նոյն կուսակցութիւնը միտամանակ
ծառայիլ և մէկ և միւս դատին առանց
մէկին կամ միւսին վնասելու, թէ զը-
րանք երկու տարբեր դործեր են, ո-
րոնք պահանջում են և տարբեր կազ-

*) «Աերագնահատումներ» եր. 66:

մակերպութիւնների գոյութիւնը:

Այդ հարցերին Լ. Աթաբէկեանը տալիս է հետևեալ պատասխանը.

«Տաճկահայ դատը, իբր մի ամբողջ ժողովրդի քաղաքական դատ, իր էութեամբ տարբերում է կովկասահայ աշխատաւորի դասակարգային դատից»:

«Տաճկահայ իրականութիւնը չէ ըստեղծել դեռ մի սոցիալիստական կուսակցութիւնն անհրաժեշտութիւնը, այստեղ բացակայում են սոցիալիստական շարժման բոլոր օբիեկտիւ նախամայմանները, իսկ Անզրկովկասում այդ նախապայմանների մեծ մասը իրականացած են արդէն և մինչդեռ սոցիալիզմը Տաճկահայաստանում մի բռնազրութիւն ուտուղիտ է, մեզ մօտ նա մի անհրաժեշտառթիւն է»: *)

Լ. Աթաբէկեանը ինքը մանրամասնորէն վերլուծում է Տաճկահայերի սոցիալանտեսական կեանքը և հիմնաւորում այդ կարծիքը, «որ տաճկահայերի համար սոցիալիստական կուսակցութիւնը անհրաժեշտութիւն չէ»: Բայց նա պիտի իր գաղափարական հակառակորդների դէմ կուել հէնց նըրանց զէնքովը: Եւ ահա այդ կարծիքը հիմնաւորելու համար նա բերում է Խաժակի (Դաշն.) հետևեալ խոստավանութիւնը.

«Կովկասը Թիւրքահայաստան չէ.

*) Միխարդ. «Ի՞նչն ենք անջատում Դ-էց եր. 15,

այստեղի թէ մտաւոր, թէ անտեսական և թէ քաղաքական պայմաններըն ահագին զանազանութիւն ունեն այնտեղից: Հէնց միայն այն, որ այստեղ կան երկաթուղիներ ու խճուղիներ, բանկեր ու այլ կրեղիտային հաստատութիւններ... որ այստեղ հարկերը բոլորն էլ դրամական են, այն ինչ այնտեղ նրանց մի խոշոր մասը բերքերով առնւող, այստեղ դրամական տնտեսութիւնն արդէն լիապէս թափանցել է երկրի ամենամեծ մասերում — մասցել են սիայն մի քանի անկիւններ, այն էլ Թիւրքիայից նոր խլւած շրջաններում: Վերջապէս այստեղ գունէ երկրի մի քանի կէտերում սկսել է խոշոր արդիւնագործութիւն՝ մանաւանդ հանքայինը և զործարանայինը: Բազում, Թիֆլիսում, Բաթումում, Սանահնի ձորում, Զանգեզուրի հանքերում, Գետաբէկում արդէն կազմել են հայ բանւորութիւններ, եթէ ոչ վերջնականապէս կարած իրենց կապը մայր հողի հետ: Մետաքսագործական գործարանները, բոմբակի, կօնսերվների, բըինձի և այլ տեսակի արտադրութիւններն արդէն կամաց-կամաց սկսում են մանը տնայնագործական ձերց անցնել խոշոր կապիտալիստական ձեր:

«Միւս կողմից հողի սակաւութիւնը միսում է շերտաւորել մեր գիւղացիութիւնը, մանաւանդ Ղարաբաղի շրջակայթի գաւառներում: Գիւղացիական

դասը դառնում է գիւղացիական դասակարգ, կազմում է աշխատաւոր գիւղացիութիւն (անհող, սակաւահող և իր աշխատանքի համաչափ միայն հող ունեցող) և գիւղացի կոչող, նոյն իսկ գիւղում ապրող, բայց ուրիշներին կեղեքելով պարապող մի դասակարգ գիւղական բութուազիա»: *)

«Քրողը—աւելացնում է Աթաբէկեանը—սրամիտ Խաժակն է, Խաշնակցութնան յաւիտենական պատուհասը»:**)

Պատուհասը, որովհետեւ նա իր հակառակորդների ձեռը այդպիսի արդումնաներ է տալիս:

Եւ այսպէս ուրեմն այդ երկու դատերը—Տաճկահոյ դատը և ոռուսահյա աշխատաւութեան դասակարգային դատը—էապէս իրարից միանգամայն տարբեր դատեր են, և որովհետեւ այդ այդպէս է, Աթաբէկեանը ասում է.

«Մենք պահանջում ենք միայն երկու տարբեր գործերի համար մի ամբողջ ժաղովրդի քաղաքական ազատագրութեան և մի դասակարգի սոցիալիստական շարժման համար—երկու անկախ կազմակերպութիւններ»:

«Մեր նպատակը չէ կովկասահային բաժանել տաճկահայից, այլ աշխատաւորի սոցիալիստական շարժումը եւ կազմակերպութիւնը բաժանել մի ամբողջ ազգութեան միջնարակը»

*) Վերագնահատումներ եր. 120:
**) Ibid.

գային, բայց այնուամենայնիւ բութուազիայի զեկավարութեան տակ գտնող շարժումից եւ կազմակերպութիւնից»*): Ընդգծ. մեն են Ն. Տ.

Իսկ ինչո՞ւ ոռուսահյա աշխատաւորական կուսակցութիւնը պէտք է անկախ լինէր Տաճկահայ դատին նւիրւած կուսակցութիւնից: Որովհետեւ այդ դէպքում նրա համար պարտազիր, ծըրագրային չէր լինի տաճկահայերի ազատագրութեան գործին օժանդակելը, իսկ ինչո՞ւ այդ օժանդակութիւնը չը պէտք է պարտազիր լինէր:

«Պարտազիր, այսինք ծրագրային, չի կարող լինել Անդրկովկասում զործող մի սոցիալիստական կազմակերպութեան օժանդակութիւնը տաճկահայերի ազատագրական գործին հետեւալ պատճառներսից:

Նախ, որովհետեւ այդպիսով կարող է տուժել թէ սոցիալիստական կազմակերպութիւնը և թէ տաճկահայ քաղաքական կուսակցութիւնը:

«Սոցիալիստական կազմակերպութիւնը պիտի երաժարւի այդ դէպքում այն աշխատաւոր տարբերից և խըմբակցութիւններից, որոնք ընդունում են սոցիալիստական ծրագրը, իսկ տաճկահայերին օգնելու ծրագրային պարտականութիւնը չեն ընդունում:

«Ապա, եթէ տաճկահայ գործը գըտ-

*) Բիւրարդ, «Ինչու ենք անջատում Դիցեր, 20:

նոր մի սոցիալիստական կազմակերպութեան ղեկավարութեան տակ, կամ եթէ նա առաջ տարբի մի այդպիսի կազմակերպութեան պարտադիր աջակցութեամբ, տաճկահայ գործը պիտի զրկի այն մասնակցութիւնից և օժանդակութիւնից, որը կարող են ցոյց տալ և երկու տասնամետակի ընթացքում ցոյց են տւել հայ ժողովրդի ոչ սոցիալիստական տարրերը:

«Միւս կողմից, եթէ այդ տարրերի աջակցութիւնը կատարվի մի սոցիալիստական կազմակերպութեան միջոցով, պիտի ընդունի այդպիսով և նըրանց մասնակցութիւնը և ազգեցութիւնը այդ սոցիալիստական կազմակերպութեան մէջ, պիտի թոյլ տրի, որ յեղափոխական մանր բուժութուան կամ ազգասէր խոշոր բուժութուան և հակասոցիալիստը շարունակեն մթնացնել աշխատաւոր մարդու դասակարգային գիտակցութիւնը: Այսինքն կովկասեան Դաշնակցութիւնը պիտի կրկնի»:

Այս պատճառներով էր առա, որ կովկասում պէտք էր ստեղծել մի անկախ սոցիալիստական կուսակցութիւն և այդ պատճառներով էր, որ առաջացաւ անջատական շարժումը այստեղ, այլ ոչ այս կամ այն անձաւութեան քմահաճոյքի պատճառով: Որ սոցիալիստական այդ շարժումը մի որևէ է անձնաւորութեան արհեստականօրէն ստեղծած գործը

չէր, դա պարզ էր նաև նրանից, որ քանւորութեան մէջ այդ հուսանըը, ինչպէս ցոյց տւինք վերը, սկըսւած էր վաղուց:

V

Եթէ այսպիսով անհրաժեշտ է մի անկախ սոցիալիստական կուսակցութեան ներկայութիւնը այստեղ, հարց է առաջ գալիս թէ ինչպիսի գիրք է բանելու արդ կուսակցութիւնը գէսի տաճկահայ գատը: Յայ հարցը հայսոցիալիստական (անջատական) հետեւապէս և Աթաբէկեանի աշխարհայեացքի հիմնական ինսպիրներից մէկն է, որովհետեւ այն հայեացքից, որ նա պիտի ունենար այդ իննուի մասին, բնականօրէն պիտի բղխէր և ազգային քաղաքականութեան նոր ըմբռնումը:

Պինչե այդ, ինչպէս յայտնի է, բոլոր հայ կուսակցութիւնները—մշակական, հնչակեան թէ գաշնակցական—տաճկահայերի ազտագրութիւնը համարում էին անջատահայկական, սեպարատ—ազգային մի գործ, որ կարելի էր գլուխ բերել միայն և միայն երոպական պետութիւնների միջամտութեամբ: Այստեղից էլ սուաջանում էր այն զործելակերպը, որին տասնեակ տարիներ հետեւ են այդ կազմակերպութիւնները: Արտասահմանում պրօգագանդ մզել հայոց հարցի վերա-

բերեալ հասարակական հայանպատմությունը առաջ բերելու համար, իսկ Տաճկաստանում ցոյցեր և ապստամբութիւններ՝ թէկուզ և անպատրաստ ապստամբութիւններ կազմակերպել և այդպիսով եւրոպական գիտլօմատիայի ուշադրութիւնը գրաւել հայերի վիճակի վրայ և ստիպել նրան միջամտելու տաճկական գործերին հայկական հարցին բաւարար լուծումն տալու համար — ամա այն գործելտկերպը, այն ճանապարհը, որին հետեւել են մեր աղքային գործիչները տարիներ շարունակ:

«Մեր հայեացքը — ասում է Ն. Աթարէկեանը — տաճկահայ խնդրի մասին հետեւալն է:

«Ճանկահայ ինդիրը տաճկական մեծ ինդրի բաղկացուցիչ մասն է միայն Խենթութիւն է կարծել, որ հայ ժողովուրդը, որը մինչեւ անգամ իր հայրենիքում փոքրամասնութիւն է կազմում. պիտի կարողանայ սեփական ոյժերով ազատագրել, Խենթութիւն է կարծել, որ եւրոպական գիտլութեան և տաճկահայ դատի երկու զոյտ եւրոպական բարեկամները պիտի կարողանան նալպատել յատկապէս տաճկահայերի ազատութեան գործին. Հայ ժողովուրդը պիտի ազատի տաճիկի հետ միասին, կամ ընաւ չպիտի ազատի. Տաճկահայ յեղափոխութիւնը, այդ պատճառով, տաճկական յեղափոխութեան

բազկացուցիչ և ենթակայ երևոյթներից մէկը պիտի կազմի և չի կարող ունենալ որևէ է սեպարատիստական նպատակ:

«Հայդուկային արշաւանքների, անպատրաստ ապստամբութիւնների, դիպումատիական ակն կալութիւնների և պարլամենտական հարցապնդութեարի քաղաքանութիւնը պէտք է թողնել և ձեռնարկել անմիջապէս միջազգային յեղափոխութեան կազմակերպութեան Թիվրիայում:

«Գուցէ Դաշնակցութիւնը, երկու տասնամեակի չափազանց գառն փորձերից յետոյ, կարողանայ կանկնել այս հայեցակէտի վրայ, այն ժամանակ մեր համակրանքն ու սէրը, մեր օժանդակութիւնը տաճկահայ ժողովով ազատութեան համար մարտնչող Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պիտի պատկանէ»; (Ընդգծ. մերն են):

Սա ամբողջ մի յեղալըջում էր նշանակում հայ քաղաքական մտածողութեան և կեանքի մէջ: Այն, ինչ որ տասնեակ տարիների ընթացքում հայ կազմակերպութիւնների համար անվիճելի է եղել, այն, ինչ որ մոլեռանոցութեան աստիճանի հասած ոգեորութեամբ և կուրօրէն անում էին բոլոր գաղափարական — գործիչները, ոչ միայն կասկածի է ենթարկում, այլ վե-

*) Րիխարդ. «Ինչու ենք անջատում Դիցութը, 18—19.

բագնահատւում և դատապարտում է,
իբրև մի սխալ, թէկուզ և ճակատա-
զրական մի պատմական սխալ, և հա-
կադրւում մի ուրիշ բանի:

Տաճկահայերը—ասւում է այստեղ—
Տաճկաստահում ապրող իր հարեան
տաճիկ, քիւրդ և այլ ժողովուրդների
հետ միասին պէտք է ձգտեն ազատու-
թեան, ժողովուրդների, որոնք նոյն-
քան ճնշւած և իրաւազուրկ են գուցէ
ինչքան և իրենք: Տաճկահայ յեղա-
փոխութիւնը Տաճկաստանում ապրող
ժողովուրդների յեղափոխութեան մի
մասը պէտք է լինի և որի է սեպա-
րատիստական նպատակ չպիտի ունե-
նայ: Հայ ժողովուրդը կամ պիտի ա-
զատի թուրք, քիւրդ և այլ ճնշւած
ժողովուրդների հետ միասին, կամ
ինքը մենակ, տառնձին, սեպարատ
ճանապարհով չպիտի ազատւի: Ահա
ինչու և պէտք է թողնել մեր վարած
ամբողջ սխալ ազգային քաղաքակա-
նութիւնը տաճկահայերի վերաբերեալ
Պէտք է թողնել այն բոլոր յոյսերը,
որ գնում էինք եւրոպական գիտո-
մատիայի վրայ, պէտք է թողնել և
անսպատրաստ ազստամբութիւնների,
հայուկային՝ նոյնիսկ հիացմունք ա-
ռաջացնող արշաւանքների մեր գոր-
ծելակերպը, բոլոր իրենց ազետարեր
հետանքներով: Եւ Տաճկաստանում
պէտք է գիմել նոր ու ճշմարիտ յե-
ղափոխական ճանապարհի, այն է մի-
ջազդային յեղափոխական ճանապարհի:

Տաճկահայը պէտք է ասի իր հարե-
ւաններին, որ ինքը չի ձգտում նրա-
նից բաժանուելուն, այլ որ կամենում է
նրանց հետ միասին ընդհանուր ոյժե-
րով և համերաշխութեամբ բոլորի գը-
րութիւնը բարուրել, կեանքի մարդա-
վայել պայմաններ ստեղծել, որ նա
պատրաստ է նրանց հետ միասին ա-
զատութեան ձգտել:

Սա, ինչպէս ասացինք, մի կատա-
րեալ յեղաշրջում էր նշանակում հայ
հասարակական մտածութեան մէջ,
սա նշանակում էր հիմնական քննու-
թեան և վերագնահատման ենթարկել
բոլոր հայ հասարակական ձգտումներն
ու իղեալները և զնել նրանց միակ
ուղիղ և միջազգային պատռանդանի
վրայ*): Մի խօսքով սա նշանակում էր
ամբողջ քաղաքականութիւնը փոխել—
տաճկահայ ազգային սեպարատիստա-
կան քաղաքաքաղաքնութեանը հակա-
զրել մի նոր միջազգային քաղաքակա-
նութիւն:

Եւ այն անկախ անդրկովկասեան
սոցիալիստական կուսակցութիւնը, որ
պէտք է առաջ գար և առաջ եկաւ ի
գէմս Հայ սոցիալիստ յեղափոխական
կուսակցութեան բնականորէն պէտք
է կանգնէր և կանգնած է այդ տեսա-

*). Այդ տեղից է առաջ գալիս այն, որ ան-
ջատական հայ սոց-յեղ անփոխականները ի-
րենց գիտական ժողովածուին տալիս են «վե-
րագնահատումներ» անունը:

կէտի վրայ տաճկահայ խնդրի նկատմաժբ. նա կարող էր օժանդակել միայն այն կազմակերպութիւններին, որոնք այդ գործելուակերպն էին ընդունում:

«Մենք—ասում է Աթաբէկեանը— ամեն մի տաճկահայ շարժման, ամեն մի տաճկահայ յեղափոխական կազմակերպութեան և ամեն մի յեղափոխական ձեռնարկի չպիտի օժանդակենք: Մենք կօժանդակենք միայն այն կազմակերպութիւններին, որոնք բաժանում են մեր հայեացքը տաճկահայ խնդրի վերաբերմամբ և որոնց գործելակերպը մենք կըհամարենք նպատակայարմար*):

Եւ ով գիտէ, եթէ հայ սոցիալիստ յեղափոխական կազմակերպութիւնը ծաւալէր ամրող ռուսահայ աշխատաւորութեան մէջ, ձեռք բերէր նոյնպիսի աղղեցութիւն, ինչպիսին ունի, օրինակ, վրաց սոցիալ-դեմոկրատիան վրաց ժողովրդի վրայ, նա շնորհիւ իր այս միջազգային, քաղաքականութեան թերևս կարողանար կանխել շատ փոքրանքներ, որոնք տեղացին հայ ժողովրդի գլխին, գտնել մի ընթանուր լեզու մեր հարեան աշխատաւոր ժողովրդների հետ: Նա կընկատաւէր յեղափոխական շարժման և սոցիալիստական կազմակերպութեան առաջ դալուն և զարգանաւ-

լուն նաև մեր հարեւանների մէջ: Յայտնի է, որ այս յեղափոխութեան ժամանակ Ղարաբաղի թուրք գիւղացիութիւնը հայ սոցիալիստ-յեղափոխական է. Աթաբէկեանին պատգամաւոր ընտրեց Համառուսական գիւղացիական համագումարի համար: Իր ընտրութեան մէջ թուրք գիւղացիութիւնը չէր սխալում: Նա լաւ էր հաօկանում, որ սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնն է իսկական պաշտպանը նուսաստանի համայն աշխատաւորութեան, հետևադէս և թուրք գիւղացիութեան շահերի: Դժւար չէ երևակայել որ եթէ սոցիալիստ - յեղափոխական կուսակցութիւնը մեր մէջ դառնար տիրող կուսակցութիւն, նա անշուշտ, մեծ վստահութիւն կը վայելէր իր էւութեամբ գերազանցապէս յեղափոխական թուրք ժողովրդի կողմից:

Բայց հանգամանքները ոյլ կերպ դասաւորւեցին: 1905—6 թւականներից յետոյ ուսակցիան հետզհետէ ուժեղացաւ, իսկ միւս կողմից մեր կիանքի մէջ խոր արմատներ ձգած կուսակցութիւնները արգելք հանդիսացան նորափթիթ սոցիալիստ-յեղափոխական շարժման ծաւալման: Թէ մէկ և թէ միւս պատճառով հայ աշխատաւորութիւնը հնարաւորութիւն չունեցաւ ծանօթանալու իր այս նոր և իսկական ժողովրդական-աշխատաւորական կուսակցութեան հետ: Եւ մեր հրամանադր կուսակցութիւնները

*.) Տիկարդ եր. 18

հայ բուրժուա-դեմոկրատական օլի-
գարիստան, շարունակեց իր վտանգաւոր
և ազգակործան քաղաքականութիւնը,
ազգագործան մանաւանդ պատերազմի
ընթացքում, երբ այդ կուսակցութիւն-
ները կատարեալ գործիք դարձան ցա-
րիզմի ձեռքին, և նրա թելազբանքով,
առանց հայ ժողովրդի կամքը հարց-
նելու, նրան կուսող կողմ յայտաբա-
րեցին, կամաւորական խմբեր կազ-
մակերպեցին և ալին (թէև պէտք է
ասել որ այդ խմբերի անդամների թիւը
5—6 հազարից գենը չանցաւ): Այդ
ժամանակ, երբ այդ կուսակցութիւն-
ները գործում էին ազատ, օգտելով
մամուլի ազտառութիւնից, երբ «Հորիզո-
նը» Հայաստանի աւտօնօնիայի հարցով
է զբաղուած, հայ սոցիալիստական հո-
սանքները ստիպւած էին լոկու սահ-
մանափակւելով գաղտնի ժողովներով
բողոքներ և ոեզօլիցիաներ հանելով
այդ ամենի գէմ: Ժողովրդի բարեկամ-
ների համար գործելու զրելու և խօ-
սելու ազատութիւն չկար և հայ սո-
ցիալիստների ձայնը՝ զգուշացուցիչ և
հեռատես խօսքը չհասաւ հայ աշխա-
տաւոր ժողովրդի ականջին:

VI

Սոցիալիզմի վիտական ըմբռնումից
ելնելով լ. Աթարեկիանը մօտենում է
նաև մի կարեռ խնդրի, այն է ազգի
և ժամանակակի փոխ-յարաբերութեան
խնդրին: Եւ այս հարցում էս, ինչպէս

և սոցիալիզմի նա հակազրում է իր,
սոցիալիստ-յեղափոխական ըմբռնումը
դաշնակցական ըմբռնման:

Համ գաշնակցական թէօրիտիկո՞
Խաժակի, «սոցիալիստ-յեղափոխականի
համար կան բազմաթիւ ազիք, որոնց
մէջ կան զասակարգեր, աշխատաւոր
և կեղեքողք»:

Ոյս տեսակէտի համաձայն „ազգ“
գազափարը աւելի բարձր գազափար
է քան գասակարգը և հետեւալէս ա-
ռաջինին ստորագաւած է հրկրորդը:

Նկատելով, որ «պ. Խաժակի այս մը-
տաւոր արտադրութիւնը ոչ մի ա-
ռաջնութիւն չունի սոցիալիստ-յեղա-
փոխական մտածողութեան հետո»*) լ.
Աթարեկիանը տալիս է ազգութեան և
դասակար լի բնորոշումները:

Նախ ինչ է ազգութիւնը:

Ազգութիւնը — ասում է նա — մի
կողմէկտիւ անհատականութիւն է, որը
առաջ է եկել մարդկանց կենակցու-
թիւնից և արիւնակցութիւնից: Կե-
նակցութիւնը և արիւնակցութիւնը,
այսինքն վիճակակցութիւնը կամ ընդ-
հանուր պատմութիւնը առաջ էն բե-
րել առանձին անհատների մէջ պսի-
խոֆիզիքական նմանութիւնները, փոխակարձ

*) Եվրազնահատումներ» եր, 84.

**) Այսինքն մարմական, արտաքին հոգե-
բանական նմանութիւն (բնաւորութիւն և ար-
թիւն):

համակրանքը, լեզուն, գեղարվեստը,
ինքնապահպանման և ինքնապաշտ-
պանման զգացումները և անկախու-
թեան ձգումը և այն բոլոր գաղա-
փարները, զգացումները և տեսչերը,
իդէաները, պատասիրութիւնը և այ-
լըն, որոնք բղխում են այդ հիմնական
տարրերից կազմում են ժամանակա-
կից ազգութեան էութիւնը:

«Եսոշոր թիւրիմացութիւն կը լինէր
սակայն կարծել, որ ազգութիւնը,
այսինքն ազգի պահիսական բովան-
դակութիւնը, մի անփոփոխ ամբող-
ջութիւն է:

«Ազգութիւնը իբր մի մարդկային
կողինտիւ անհատականութիւն, ինչ
պէս և այն ամենը, ինչ որ մարդկա-
յին է, ենթակայ է թէն գանդաղ,
քայց մշտական փոփոխութեան: Նո
կարող է իր որակը հիմնովին փոխի*):

Սպա նա լիբրում է Լավրովի հետև-
եալ կարծիքը:

«Մինոյն ազգը կարող է իր պատ-
մութեան ընթացքում տարբեր գաղա-
փարների ներկայացուցիչը դառնալ:
Երբեմն նա դառնում է մի առաջա-
պիմական գաղափարի նւիրւած շարժ-
ման զեկափարը, մի ուրիշ գէպքում
նրա զրօշի գրայ գրւած կըլինի մի
ուրիշ գաղափար, որը ամենից յետո-
պիմական ազգեցութիւնն ունի մարդ-
կութեան գրայ»: (Պ. Լ. Պարօն,

*.) «Վերաբնահատումներ» եր. 96:

Истор. письма, З-е изд. եր. 206):

«Ե՞նչ է ներկայացնում միսս կող-
մից—շաբունակում է Աթարէկեանը—
այս կամ այն դասակարգը առնասա-
րակ և մեզ նետաքրքրող աշխատաւոր
դասասարգը մասնաւորապէս:

«Եսորից հասարակական մի զրուպ-
պա, որի անդամները ունեն մի շաբք
ընդհանուր պսիխիական գծեր, կապ-
ւած են իրար հետ նոյնատեսակ նիւ-
թական և իդէական՝ շահերով տոգոր-
ւած են փոխադարձ համակրանքի և
վիճակակցութեան զգացումով, ձգում
են նոյն հասարակական իդէային մը-
զում են միացած ոյժերով իրենց ինք-
նապահանման և ինքնապաշտպան-
ման գործը, մի հասարակական զրուպ-
պա, որի իդէական բովանդակութիւնը
նոյնքան ենթակայ է պրօքրեսով և
ընդունում է վոլուցիայի, որքան և ա-
մեն մի ուրիշ մարդկային խմբակցու-
թեանը: Դասակարկային ոգին, ինչ-
պէս և ազգութիւնը ունի մեծ խմբի
միասին տառապելուց է բռւսել նրանց
թափած արցունքով ջրւել, միասին
խնդացած ուրախութեան արևով ջեր-
մացել, հասունացել» (Խաժակ, Զմարս-
ւած բառեր):

«Եթէ այդպէս է—հարց է տալիս
Աթարէկեանը—ապա ինչու առաջնու-
թիւնը տալ ազգին և ոչ գաղափար-
գին*):

«Սոցիալիստական մտածողութիւնը

*.) «Վերաբնահատումներ» եր. 97:

աղզի և դասակարգի վոխյարաբերութիւնների մասին պիտի յենի մարդկային խմբակցութիւնների զարգացման տեսդենցի վրայ, իսկ այդ տեսդենցի կայտնում է աւելի խօշոր խմբակցութիւնների առաջացման մէջ, ըստ որում այս նոր և խօշոր խմբակցութիւնների բաղկացուցիչ մասերը կորցնում են իրենց նախկին պահիխական բովանդակութիւնը կամ պահպանում են այն, եթէ այս վերջինը պարունակել է իր մէջ պրօգրեսիւ տարրեր, Գաւառական հայրենասիրութիւնը, զաւանական յարաբերութիւնները տեղի են տալիս աղդային գտղափարին և մենք տեսնում ենք բոլոր գաւանների և զաւանանքների միացումը ի մի աղդ: Զքանում են միմիայն իրենց արհեստակցական նեղ շահերով ապրող աշխատաւորական խմբակցութիւնները և առաջ է գալիս մի երկրի աշխատաւոր դասակարգը:

«Կապիտալիստական հասարակութեան ծոցում ծնունդ է առել մի նոր երեսյթ, Բոլոր ազգերի աշխատաւորները սկսում են գիտակցի իրենց նիւթական և իդէական շահերի ընդհանրութիւնը: Համաշխարհային տըստեսութիւնը, աշխատանքի միջազգային բաժանումը, հազորգակցութեան կատարելագործւած միջոցները, միենայն ընկերակցական աշխատելակերպը, կապիտալիստական միատեսակեղեցը, սոցիալիստական կացու-

թեան, տանջանքների և տենչանքների միակերպութիւնը, միենոյն թշնամին (այսինքն կալւածատիրութիւնը և բուրժուազիան Ն. Տ.) սոցիալիստական միջազգային շարժումը գալիս են դուրս բերելու աշխատաւոր մարդկութիւնը ազգային անհատականութեան նեղ սահմաններից և ստեղծելու մի նոր, աւելի բարձր կարգի պահիխական անհատականութիւն: Հասարակական կեանքի հորիզոնի վրայ ընդուժարում է արդէն աշխատաւոր մասսաների եղբայրական կոլլեկտիվ, որն աւելի բարձր է քան ազգը, ցեղը եւ կրօնը, բայց որը չէ ժխտում ընաւոչ ազգը, ոչ ցեղը և ոչ կրօնը, այնպէս, ինչպէս ազգը չի ժխտում իր ծոցի մէջ ստեղծւած անհատականութիւնները: Նոյն տանջանքով և տենչանքով ապրող աշխատաւորական կունկտիւ անհատականութիւնը առաջ կը բերի անտարակոյս իր ուրոյն գեղարւեսաը, իր ուրոյն երգը, երաժշտութիւնը և քանդակագործութիւնը:

«Մեծ աշխատաւոր դասի այս կամ այն ազգային հատւածը, ցեղի, կլիմայի, վայրի, պատմական աւանդութիւնների ազգեցութեան տակ, կը պահպանի, անտարակոյս, իր քիչ թէ շատ ուրոյն գունաւորումը, յատկութիւնները, սովորութիւնները, լեզուն և գեղարւեսաը, սակայն այս ամենը նոյն յարաբերութիւնը կունենայ դէպի աշխատաւոր դասակարգի ապագայ ըստ

տեղծագործութիւնը, ինչ յարաբերութիւն գաւառական կուլտուրան ունի դէպի ազգային կուլտուրան:

«Այս է հասարակական պրոգրեսիւ զարգացման տենդենցը և սոցիալիստական կազմակերպութիւնը, նպաստելով մի աշխատաւորական իդէօլոգիայի մշակման, աշխատաւոր դասակարգի ազգային հատւածները մօտեցնելով իրար, ստեղծելով հանրաշխատաւորական հիմնարկութիւններ, բարձրացնելով աշխատաւորների կուլտուրական նիվոն, գործում է այդ պրոցերսիւ տենդենցի ուղղութեամբ»:

«Երա վարժունքի գիծը նախորոշւած է այդ տենդենցի յստակ ըմբռնողութեամբ»):

Այստեղ Աթարէկեանին մենք նորից տեսնում ենք կանգնած գիտական հոգի վրայ, և պէտք է ասել նա առաջին է մեր մէջ, որ հարցը դնում է այդ հողի վրայ»):

Ազգութեան և դասակարգի փոխարարերութեան խնդրին նա միանգամայն ճիշտ կերպով մօտենում է ինչպէս հասարակական զարգացման, նոյնպէս և պրոցերսի, մարդկութեան յառաջադիմութեան տեսակէտից:

Հասարակական զարգացումը,

*) «Վերագնահատումներ» եր, 98-99.

**) ԾԱՆՕԹ. Լ. Աթարէկեանը այդ հարց յատուկ ուսումնասիրութեան նիւթ է զարձրել իր «Ազգութիւն և դասակարգ» էտիւդի մէջ: Ն. Տ.

տանում է դէպի մարդկային խողոք խմբակցութիւնների առաջտցումը: Մանը ցեղերը միանում են ազգութիւն կազմում, մանը աշխատաւորական իրենց նեղ արհեստակցական շահերով կապւած խմբակցութիւնները միանում են և կտգմում մի պետութեան աշխատաւոր դասակարգ, վերջապէս բոլոր ազգերի աշխատաւորները սկսում են արգէն գիտակցել իրենց տնտեսական, և իդէական շահերի ընդհանրութիւնը և «համարակական կեանքի» հորիզոնի վրայ արգէն ընդնշմարւում է աշխատաւոր մասսաների եղբայրական կոլլեկտիւը, որն աւելի բարձր է քան ազգը, ցեղը և կրօնը, բայց որը չէ ժխտում բնաւոչ ազգը, ոչ ցեղը և ոչ կրօնը: Եւ այն ամենը, ինչ որ նպաստում է միջազգային աշխատաւորական այս կոլլեկտիւի զարգացման ցանկալի է և յառաջադիմական, որովհետև այդ զարգացումը համապատասխանում է անհատի բազմակողմանի և ներգաշնակ զարգացման, և, ընդհակառակը, ոչ ցանկալի և յետադիմական է այն ամենը, ինչ որ խանգարում է գրան:

Ահա ինչու Լ. Աթարէկեանը միջազգային մեծ աշխատաւորական դասակարգը աւելի բարձր հասկացողութիւն է համարում, քան ազգութիւնը և Խաժակի այն տեսակէտը, որի համաձայն «ազգը» աւելի բարձր զարգափար է, քան

դասակարգը, անւանում է յետադիմական:

„Դաշնակցութիւնը—աւելացնում է նա—յանձինս իր միակ շնորհալի թէութեակոսի (Թաժակի, Ն. Տ.) ազգի և դասակարգի փոխարաքերութիւնների արդի կացութիւնը դարձել է ծրագիր և յայտնագործել է այդպիսով մի ամբողջ յետադիմական բովանդակութիւն *):

VII

Ի՞նչպէս է Աթարէկեանը վերաբերում Դաշնակցութեանը, իբրև մի հասարակական երեսյթի: Մենք մասսամբ արգէն ծանօթացանք Դաշնակցութեան իդէօլոգիայի հետ, որին նա հակադրում էր իր, սոցիալիստ-յեղափոխական իդէօլոգիան: Մենք տեսանք, թէ ինչպէս էր Դաշնակցութիւնը ըմբռնում սոցիալիզմը, ազգի և դասակարգի փոխարաքերութիւնը և ազգային քաղաքականութիւնը:

Բայց ինչպէս էր բացատրում այն, որ Դաշնակցութիւնը այդ գաղափարներն էր գաւանում և ոչ թէ մի ուրիշը: Ինչպէս էր բացատրում, որ Դաշնակցութեան գեկավարները այդ կերպ էին հասկանում սոցիալիզմի, ազգութեան և դասակարգի գաղափարները և ոչ թէ մի ուրիշ կերպ: Բացատրում էր դա, արգեօք, պատահական պատճառներով, որինակ Դաշնակցական թէորե-

տիկոսների անշնորհքութեամբ կամ տպիտութեամբ, թէ դա ունէր իրախոր սոցիալոգիկական պատճառները:

Խաժակ, Սիմ. Զաւարեան և այն, որանք բոլորը ոչ պատրաստութիւնից էին զուրկի, և ոչ էլ շնորհքից նոյնիսկ տաղանդից: Դէպի Սիմ. Զաւարեանը, իբրև մի յեղափոխական, մաքի վաստակաւոր մի մշակ և բարոյապէս բարձըր մի անձնաւորութիւն, Աթարէկեանը տածում էր նոյնիսկ համակրանքի ամենախոր գգացում, Իսկ Խաժակին, ինչպէս տեսանք, յաճախ նա անւանում է «ըրամիտ», «չնորհալի» և անւանում է առանց հեղնանքի, իրօնիայի, որով այնքան առատորէն օժտել էր նրան բնութիւնը: Բնական է, որ եթէ Դաշնակցութեան ղեկավարների մաածողութեան մէջ սոցիալիզմը, դասակարգային շահը և այն այս կամ այն ձեակերպումն են ստանում, դա չը պիտի բացատրել ոչ նրանց ցածր ընդունակութիւններով, և ոչ էլ անպատրաստականութեամբ: Եւ Լ. Աթարէկեանը, ինչպէս յատուկ է զիտականօրէն մտածող մի մարդու, այս գէպքում ևս որոնում է Դաշնակցութեան, իբրև սոցիալական երեսյթի սոցիալական պատճառները:

«Դաշնակցութիւնը, ասում է նա—իբրև մի երկարատև հասարակական երեսյթ չի կարող քննութեան ենթարկել իր այս կամ այն մօմենտի մէջ,

*). «Կերագնահատումներ» եր, 99:

այլ պիտի քննուի, ինչպէս գերմանացիներն են ասում՝ im Flusse):

Այնուհետև նա տալիս է այդ կազմակերպութեան առաջացման պատճառները և զարգացման համառութառմութիւնը:

«Նա (Դաշնակցութիւնը) —ասում է Աթարէկեանը—սկիզբ է առել այն ժամանակ, երբ թիւրք կառավարութեան քաղաքականութեան տնտեսական կրկնակի հալածանըը հասել էր իր ներուժութեան ծայրայեղ աստիճանին, երբ հայ ժողովուրդը յաջողել է ձեռք բերել իր՝ մի կոլլեկտիւ անհատ, մի ազգ ինեւու զիտակցութիւնու, երբ նա կարողացել է արտագրել մի ինտելիգենցիա: (Ընդումներ մերն են, Ն. Տ.):

«... Տաճկահայ մասսան իր կողմից ինքը զինքը մի ազգային ամբողջութիւն է և տեղական ու ոռուահայ ինտելիգենցիայի զեկավարութեամբ ըստեղծել է իր ազգային կազմակերպութիւնը և շարժումը»:

«Առաջ է եկել Դաշնակցութիւնը**):

Ցիշտակելով, որ հայ ժողովուրդը այդ ժամանակ ապրում էր Գ. Բաթիպայի «ազատ երգեր»-ով Բաֆփու վէպերով, Հեշակով, Ֆրօշակով և այլն, նա ասում է.

«Ինտելիգենտ թէ կիսաինտելիգենտ, ուազմիկ և կազմակերպիչ Դաշնակցութիւնը այդ ազբիւրներից էր քաղում

*) «Վերագնահատումներ» եր. 102:

**) նոյնը եր. 104:

իր ամբողջ քաղաքական իդէօգին: Թերահաւատութիւնը դէպի կուլտուրապէս այնքան առընթեր գրացի ազգերը և մեծ հաւատը դէպի զիպլոմատիի միջմատութիւնը այդ իդէօգիի ամենից կարեռ անկիւնաքարերն էին կազմում և ուղղութիւն էին տալիս դաշնակցութեան բովանդակ գործունէութեամբ»:

«Նրա լօգունդն էր՝ հայ ժողովրդի քաղաքական ազատազրումը հայերի ձեռով և դի զլոմաների օժանդակութեամբ» *):

Այնուհետև նա կանգ է առնում Դաշնակցութեան կովկասեան գործունէութեան վրայ:

Դաշնակցութեան, ինչպէս և իւրաքանչիւր գեմոկրատիայի գոյութիւնը —ասում է նա—պայմանաւորած է դասակարգերի համերաշխութեամբ և գործակցութեամբ և նա, ինչպէս այդ պարզ է ամեն մի մոտածողի համար, գաւել է իր լրիւ արտայայտութիւնը և ծաւալել է իւր էներգիի մաքսիմումը, միայն այն մօմենտներում, երբ դասակարգային ներհակութիւնը տեղի է տել զասակարգերի համերաշխութեան: Նրա գոյութեան չօրս էտա զները համապատասխանում են հայ կեանքի այդ մօմենտներին, որանք կոչւում են Թիւրքանայ ազատազրութիւն, հայլուսաւորչական կալածաների գրաւում, հայ-թուրքական պատերազմ և

*) «Վերագնահատումներ» եր. 104:

հայոց կաթողիկոսի մահ*):

Այսպէս ուրեմն Դաշնակցութիւնը ունի իրա գոյութեան պատմական պատճանները։ Դրանք են „Թիւրք կառավարութեան քաղաքական և տնտեսական հալածանքները» տաճկահայերի գէմ, հայ ժողովրդի ազգ լինելու գիտակցութիւնը։ Եւ նրա գործունէութիւնը պայմանաւորւած է եղել գառակարգերի համերաշխութեամբ և զործակցութեամբ։ Հետևապէս ինքը պատմութիւնը գաշնակցութիւնից ստեղծել է մի կուսակցութիւն, որ ընզգրկում էր ամեն տեսակի գառակարգեր, ամեն տեսակ սոցիալիստական տուրքեր։ Այդտեղ կային և բուրժուական և կղերական և բանւորական և այլ տարրեր։ Եւ ահա քանի գեռ անփանգ էր կուսակցութեան ամբողջութիւնը, սոցիալիզմի մասին խօսք չկար գաշնակցութեան վեկավարների շրջանում։ Բայց երբ գաշնական բանւորները, ինչպէս ասացինք վերը, սկսում են զեռ 1901 թւեց պահանջել Կովկասեան գործունէութիւն, այսինքն գառակարգացին կախւ, երբ 1903 թւականին մի խումբ գաշնակցական բանւորներ գուրս են գալիս կուսակցութիւնից և հիմնում սոց.դիմ. բան։ հայ կազմակերպութիւնը և երբ, վերջապէս, 1904 6 թւին մի նոր, աւելի մեծ անջատում է առաջ գալիս, որով հիմք է գրաւմ սոցիալիստ-յեղ։ Կազմակերպութեան,

*) Նոյնը եր. 107.

այն ժամանակ դաշնակցութեան առաջ կանգնում է մի հարց։ կունի սոցիալիզմի, գառակարգացին կուի գաղափարի դէմ, թէ հաշտեցնել նրան աղգային գաղափարի և գառակարգային համերաշխութեան հետ։ Դաշնակցութիւնը ընտրում է վերջինը, այսինքն հաշտութեան ճանապարհը։ Այստեղից է ահա, որ առաջ էր եկել սոցիալիզմի գաղափարի այն աղաւազումը, աշխատաւոր գառակարգի շահի այն բնագրութիւնը կտրտումը տնտեսական-դասակարգայինի, աղգային-կուլտուրականի և մարդկային քաղաքականի, որ գանում ենք դաշնակցութեան ծրագրի մէջ։ Այստեղից է առաջ գալիս և դաշնակցական թէորիակուների այն կարծիքը, որ աղգութիւնը աւելի բարձր հասկացողութիւն է քան գասակարգը պէտք է բոլոր գէպքերում ենթարկվի աղգին։ Սոցիալիզմի և նացիօնալիզմի այս կենակցութիւնը ունէր, ի հարկէ, իր սոցիուզիֆական պատճառները, նարդիսում էր ոչ թէ դաշնակցական զեկավարների ցանկութիւնից, այլ գաշնակցութեան մէջ մտնող հակադիր սոցիալական տարրերի փոխարարելութիւնից։ Այդ կուսակցութեան մէջ կային, ինչպէս գիտենք արդէն, և բուրժուական և բանւորական և մանր բուրժուական և տաճկահայ տարրեր։ Հարկաւոր էր այսինի մի ծրագիր և իդէօլոգիա, որը կարող անար

այդ ամենին որոշ չափով բաւարարել։
Եւ ահա ստեղծում է մի իդէօլօգիա
և մի ծրագիր, որը ընդունում է մի
կողմից սոցիալիզմի գաղափարը և գա-
սակարգային կուի սկզբունքը և խօս-
տանում պաշտպանել աշխատաւորու-
թեան «անտեսական» շահը, իսկ միւս
կողմից ազգի գաղափարը աւելի վեր
է գասում, քան միջազգային մեծ աշ-
խատաւորական դասակարգի գտղափա-
րը, պահպանում է միենոյն ազգու-
թեան սահմաններում եղող գասակար-
գերի համերաշխութեան սկզբունքը,
խոստանալով պաշտպանել նրանց կուլ-
տուրական ազգային, մարդկային քա-
ղաքական շահերը եւ որովհետեւ աշ-
խատաւորութեան շահը ըստ այս սո-
ցիալիզմի անտեսական է (կուլտուրան
ազգինն է) ուստի և սոցիալիզմը վե-
րածում է սոսկ մի էկոնոմիզմի։

Դաշնակցութեան օրինակը մի աւե-
լորդ անդամ ապացուցում է այս ճըշ-
մարտութիւնը, որ կուսակցութեան
սոցիալական կազմը միշտ իր դրօշմը
գնում է նրա ծրագրի և իդէօլօգիայի
վրայ։ Գերմանական ամենամեծ կու-
սակցութիւնը, ինչպէս յայտնի է, ցեն-
տրումն է, կաթոլիկների կուսակցու-
թիւնը, որը նպատակ ունի պաշտպա-
նել կաթոլիկ եկեղեցու շահը և որը
մի կերպական-յետութիւմական կուսակ-
ցութիւն է։ Բայց որովհետեւ նրա մէջ
մտնում են և աշխատաւորական արա-
րեր, ուստի նա չէր կարող կօմպո-

միւնիւթիւն չը դիմել չը զիջել եւ շար-
քերաւ կանգնած բանւորների ամենա-
էական պահանջների առաջ։ Այդ է
պատճառը, որ նրա ծրագրի և գողա-
փարաշարի մէջ մենք ամենայիտագի-
տական կէտերի կողքին գտնում ենք
նաև պահանջներ, որոնք կարող են
բաւարարել քիչ-թէ շատ գեմակրա-
տիայի շահները։ Սակայն այդ «զիմո-
կրատական» պահանջները կամ կրում
են գոհնիկ, գողափարից զուրկ էկո-
նոմիզմի բնոյթ, կամ գրւած են ծրա-
գրի մէջ ձայներ գրաւելու համար,
այլ ոչ թէ երբեցէ նրանց իրազոր-
ծելու համար կեանքում։ Այդ է պատ-
ճառը, որ ցենտրումի ծրագրը ոչակ-
ցիօն պահանջների և «յեղսփոխական»
սկզբունքների մի կատարեալ խառ-
նուրդ է ներկայացնում։

Դաշնակցութեան օրինակը մեր ի-
րականութեան մէջ զալիս է ապացու-
ցելու նոյն ճշմարտութիւնը։ Անհրա-
ժեշտ է սակայն այսուղ նկատել, որ
Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը
խոշոր էվլիցիայ է տուջ բերել Կաշ-
նակցութեան մէջ և այժմ Դաշնակ-
ցութիւնը այս չէ արդէն, ինչ որ յե-
ղափոխութիւնից առաջ, եւ այս
ինչ ներկայացնում էր իրենից չ. Յ.
Դաշնակցութիւնը շատ առաջ, այժմ
տեսնում են թուրք Մուսաֆաթիստ-
ների մէջ, Այդտեղ էլ մենք գտնում
ենք տիրող գասակարգերի ձգտումը
միացնել ազգութեան գաղափարի շուր-

Հը բոլոր դասակարգերին, և զրանով
մի կողմից աշխատաւորութեան ուշա-
գրութիւնը հեռու պահել դասակար-
գային կուի պայքարից և միւս կող-
մից վերածնուող թուրք ազգութեան
ազգ լինելու ցանկութեանը բաւարա-
րել Հէնց այդպէս էլ ըմբռնում էր
այդ երեսութը և. Աթարէկեանը. Այդ
էր պատճառը, որ նա յաճախ ասում
էր «Մուսաֆաթը մեր նախկին Դաշ-
նակցութիւնն է համարեա»:

Ի նկատի ունենալով ահա հէնց այդ
հանգումանքը, որ մեր Դաշնակցու-
թիւնը այժմ այն չէ, ինչ Մուսաֆա-
թը, որ այդ երկու ուզգային կուսակ-
ցութիւնների նացիօնալիզմի մէջ կայ
ահազին տարբերութիւն, նա ասում
էր:

«Որքան էլ Ժխատկան լինի մեր վե-
րաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը,
որքան էլ որ մած լինին նրա մեղքերը
հայ ժողովրդի տասաջ, այնուամենայնիւ
մենք չենք կարող չը խոստովանել, որ
նա ընդունակութիւնն ունի ականջ
զնելու հայ ժողովրդական զանգւած-
ների զարկերակին, իսկ հայ ժողովր-
դի զարկերակը գերազանցապէս յեղա-
փոխական է: Եւ երբ ինքը Դաշնակ-
ցութիւնը կամենայ լինել սէակցիօն,
յիտադիմական, հայ աշխատաւոր մաս-
սաները կը խանգարեն դրան: Ահա
ինչու մենք չենք կարող հանգութեր
որպէսզի բալշենքմը կոիւ յայտարարի
հայ դեմոկրատիայի դէմ, յանձնս չ. Յ.

Դաշնակցութեան և վրաց զիմոկրա-
տիայի դէմ, յանձնս վրաց մենշենկ-
ների»

Պարզ է թէ ինչու Դ. թիւնը չի կա-
րող յետաղիմական լինել: Որքան էլ
այդ կուսակցութիւնը զիս զտնեւելիս
լինի հայ նացիօնալիզմի, հայ բուր-
ժուազիայի ազգեցութեան տակ, այ-
նուամենայնիւ նրան հետեւող աշխա-
տաւորական յեղափոխական հայ մաս-
սաների ազգեցութիւնը աւելի պիտի
ուժեղ լինի և իրօք այդպէս է:

Սոհասարակ պէտք է ընդգծել, որ
և. Աթարէկեանին յատուկ էր մի ընդ-
օրինակելու արժանի յատկութիւն, որ
երեան է զալիս նրա բոլոր հակազաշ-
նակցական ըննադատութիւնների մէջ:
Դա նրա օբիեկտիվիզմն է: Որքան էլ
որ նա խիստ է և անողոք Դաշնակ-
ցութեան վերաբերեալ իր ըննադա-
տականներում, որքան էլ որ նա այդ
տեսակէտից «սուբյեկտիւ» է, նոյն-
քան էլ օբիեկտիւ է և արդար: Հաս-
կանալ, նշանակում է ներել—ասում է
առածը: Աթարէկեանը լաւ գիտենա-
լով Դաշնակցութեան ծագման, զար-
գացման, սխալների և «մեղքեր»-ի
պատճառները կոյր ատելութեան թոյ-
նով չէր առաջնորդւում իր յարձա-
կութմների և մեղազրանքների մէջ, այլ
մի միայն ցանկութեամբ, այն է ուղ-
ղել նրա սխալները, ստեղծել նրա
դէմ յանզիման մի նոր սոցիալիստա-
կան բանակ և վերացնել այն ամենը,

ինչ վտանգաւոր է հայ աշխատաւորութեան, հայ ժողովրդի գոյութեան և զարգացման անսակէտից:

«Ես զբել եմ սիրելով: —Այսպէս վերջացնում է նա «Ինչու հնք անջատւում Դաշնակցութիւնից» իր քննադատականը, որը ուզուած է Դեան դէմ: —Եթէ իմ մտածողութեամբ վիրաւորել եմ քո զբացումները, ներից ինձ Դա դիտմամբ չի եղել»:

VIII

Դաշնակցական թէօրետիկումները ստեղծել են իւրայատուկ մի թէօրիայ, որով նրանք ճգնում են ապացուցանելու Դաշնակցութեան սոցիալիստական գառնալու հաւանականութիւնը: Դա «պաման և բիւրեղացման» թէօրիան է: Աւելի ճիշտ գոյութիւն ունին երկու թէօրիա:

Հստ Դեան մեծամասնութեան թէօրիայի զուումը մի պրոցես է, որ պիտի մարբի կուսակցութիւնը ամեն տեսակ բարոյապէս քիչ թէ շատ արտատառուած անձնաւորութիւններից: Բայց այս տեսակի զաման խնդիրը կորող է գոյութիւն ունենալ ամեն մի կազմակերպութեան մէջ: «Ճերեկի պէս պարզ է, —ասում է Աթարէկեանը, —որ, եթէ հնարաւոր լինի այդ տեսակի զուումը Դաշնակցութեան մէջ, եթէ մինչեւ անդամ մասսայական ահաբեկման միջոցով վերջնական անջատման հնթարկւեն, բոլոր դրամակով

և անպարտաճանաչ կօմիտէականները, բոլոր փամփուշտագող զինւորները, բոլոր վախկոտ խմբապետները և շուալ շրջիկները, և կուսակցութեան մէջ մընան միայն դրամատիացները, մաքուրները, քաջերը և սակաւալիտները, ու այդ ժամանակ ես Դաշնակցութեան հստարակական ընաւորութիւնը մի մազաչափ փոփոխութիւն անդամ չի կրիլ, այլ կարտայայտի աւելի սուր և որոշ կերպով իր բոլոր բացասական և դրական կողմերով *):

Հստ միւս թէօրիայի Դենը զտւում է ոչսոցիալիստական տարրերից և հնտզիեակ կարող է դառնալ զուտ բիւրեղացմած մի սոցիալիստական կուսակցութիւն: Իսկ բիւրեղացման ըստ Խաժակի հշանակում է ոչ միայն զտել, այլև «երեսոյթներին կամ կուսակցութիւններին տալ որոշ պնդացած ոչ բարացած ձևերը **):

Սյս թէորիաները այսօր նորից հրապարակ են հկել Դաշնակցութեան օրգան «Արեւում օՉախ Դաշնակցականների» առթիւ, ուստի արժէ փոքր ինչ կանգ տանել մանաւանդ երկըորդ թէօրիայի վրայ և պարզել այն հայեցակէտը, որ Աթարէկեանը ունէր այդ մասին:

Ճիշտ, է արգեօք, որ Դաշնակցութիւնը զտւում է ոչ սոցիալիստական տար-

*) «Վերագնահատումներ» եր. 101:

**) Ibid.

—ընկառ Դաշնակցութիւնից, թողնելով այս վերջինիս մէջ մի շարք՝ իր սրտին այնքան հարազատ տարրեր, որոնք կամ վճռականութիւնը կամ զիտակցութիւնը չունեին իրենց հետեւլու » *).

Այսպէս, ուրիմն, մենք տեսնում ենք, որ թէև բուրժուազիան և կղերականութիւնը հեռանում են կուսակցութիւնից, այսուամենայնիւ մեռմ են նրան մէջ նրանց սրտին այնքան հարազատ տարրեր: Միւս կողմից մենք տեսնում ենք, որ Դաշնակցութեան ղեկավարները չեն խզել իրենց անզրկութիւնները այդ գասակարգերի հետ: Բուրժուազիան և կղերականութիւնը առանձնանալով զաշնակցութիւնից շարունակում էին այնուամենայնիւ իրենց ազգեցութեան տակ պահել նրան զեկավարներին և նըրանց միջոցով ամբողջ կուսակցութիւնը:

Ուրիմն ինչ էր ներկայացնում Դաշնակցութ, սոցիալակ, կազմը, նրա մէջ մտնում էին այսուամենայնիւ բուրժուակղերական տարրեր և նրանց հարազատ ղեկավարները (բացառութիւնների մասին չէ խօսքը, ի հարկէ) կամ ըստ Աթարէկեանի պատկերաւոր արտայայտութեան նրա «ինտելեկտուէլ կատարները»: Նրա մէջ էին մտնում և մտնի բուրժուական տարրեր, մանրագաճունները Թիֆլիսի, և այլ քա-

*.) «Վերագնահատումներ» եր, 109,

րերից: «Հնարաւմը է, արդեօք,—հարց է տալիս Աաթարէկեանը—Դաշնակցութեան մէջ ջոկում սոցիալիստական իմաստով»: Հնարաւմը է, արդեօք, որ Դոնը զուի իր մէջ եղող ոչ սոցիալիստական տարրերից և բիւրեղանայ դառնայ մի մաքուր սոցիալիստական կուսակցութիւն:

Մենք գիտենք արդէն, թէ այդ կուսակցութեան կազմը ինչ տարրեր էր պարունակում իր մէջ: Այնտեղ կային և բուրժուական և կղերական և մանր բուրժուական և աշխատաւորական և տաճկանայ տարրեր: Եթի Դաշնակցութիւնը ընդունեց «սոցիալիստական» իր ծրագիրը զժգոհ էին տաճկանայերը, իսկ «խոշոր բուրժուաներից, բուրժուազիկներից (այսինքն բուրժուական ինտելիգենցիներից) և հոգևորականներից կազմւած «կղերական-բուրժուական» ըլուրը, որը մինչև այդ ամենից բարեկամական վերաբերումն ուներ դէպի Դաշնակցութիւնը և չեր զլանում օգնելու սրան իր ոսկէ խորհուրդով և ուրիշ բաներով, որի հետ մեր Դաշնակցութեան ինտելիկտուէլ կատարները մինչեւ այժմ դեռ չեն խզել իրնեց անդրկոլիսեան յարաբերութիւնները, այդ բարկը գիտակցեց իւր ուրոյն զասակարգային շահերը, մշտկեց իր զասակարգային մտածողութիւնը, մկնեց առել «Ծերուս վարժապետաների և կոպիտ խմբապետաների» գեմոկրատական կազմակերպութիւնը և պոկեց

դաքների համբարները, որոնք թէն փոքր մասշտաբով, բայց և այնպէս, շահագործողներ էին իրենց աշակերտների վերաբերեալ եւ վերջապէս երրորդ և ամենամհծ տարրը զա նրա մէջ մանող աշխատաւոր մասսան էր, աշխատաւոր բանւորը, աշխատաւոր գիւղացին, աշխատաւոր արհեստաւորը, աշխատաւոր մանրավաճառը, աշխատաւոր քահանան և այլն, այսինքն այն մասսան, որ թէ անտեսական և թէ մանաւանդ դաստկարգային գիտակցութեան տեսակէտից ոչ գասակարգ էր ճանաչում, ոչ սոցիալիզմ:

Տաճկահայ տարրը մի կողմ ենք թողնում Հնարաւոր էր ուրինա Դաշնակցութեան մէջ զտում կամ բիւրեղացում սոցիալիստական իմաստով:

Ի հարկէ ոչ:

«Եթէ Դաշնակցութեան դեկավարները—ասում է և. Աթաբէկեանը—կամենային ջոկել և հետացնել... այդ մասսայից ոչ սոցիալիստական տարրերը, այն ժամանակ Դաշնակցութիւնը պիտի հրաժարւէր ինքն իրենից, պիտի... դառնար մի փոքրիկ «խմբակ», իսկ դեկավարները պիտի լինէին, եթէ թոյլ տրւի մեզ այստեղ գործածել պ. Խաժակի չափազանց տիպիքական խօսքը «գիներալներ առանց զօրքի»*):

Իսկ եթէ Դաշնակցութեան մէջ տե-

ղի է ունենում բիւրեղացում, ևայդ բիւրեղացումը կատարւում է ոչ թէ մի էէտի, այլ երկու հակագիր կէտերի շուրջը: Դրանցից մէկը կոչում է աշխատաւորների միջազգային սոցիալիզմ, միւսը՝ «ազգային զաղափար» և տաճկահայ ժողովրդի քաղաքական աղատազբում: Սյնդէս որ աւելի յարձար կը լինէր բիւրեղացման փոխարէն գործ ածել—ներիք ոճի այս բարբարոսութիւնը—ընեռացում»*):

«Դաշնակցական ընկերների մտածողութիւնը տակաւ առ տակու ևնթարկում է զանազանաւորման և այժըմ արդէն բաւականաչափ զանազանաւորւել է: Ստղեղծւել են մտքի և ձզգտումի երկու բնեռները: Մէկը սոցիալիստական, միւսը ազգայնական»**):

Եւ իսկապէս նրանք, ովքեր ազգըն աւելի բարձր զաղափար են համարում, քան միջազգային աշխատաւորակառ մեծ զասակարգը, կանգնած են զասակարգերի համերաշխութեան տեսակէտի վրայ ազգութեան սահմաններում, սոցիալիզմը վերածում են սոսկ տընտեսական առօրեայ գործնական մի ծրագրի, իսկ կուլտուրան «ազգի», այսինքն ազգային տիրող զասակարգի գործ համարում, մի խօսքով նրանք, ովքեր ազգի և ազգասիրութեան պրիզմայի միջով են նայում ամեն մի խըն-

*) Բիխարդ, «Ինչու ենք անջատում Դիցեր, 9.

**) Բիխարդ, «Ինչու ենք անջատում Դից»:

զրի վրայ, և միւս կողմից նրանք, ովքեր գասակարգն են աւելի բարձր դասում ազգութիւնից, կանգնած են շիտակ գասակարգային տեսակէտի վշրայ և ամեն հարցի նայում են սոցիալիզմի պրիզմայով—ոչ այլ ինչ են, եթէ ոչ իրար հակառակ բնեաները եւ այսուեղ ոչ թէ դաման, այլ անջատման մասին կարող է խօսք լինել, որովհետեւ սոցիալիզմի ու նացիօնակիզմի կենակցութիւնը սիենոյն կուսակցութեան մէջ անհնարին է:

Դաշնակցութեան պատմութիւնը ապացոյց է գրան: Դեռ 1903 թւից լուկըսած նրա մէջ սկսում է անջատման այդ պրոցեսը: Մի հատւած անջատուում է և 1903 թւին հիմնում է սոց-գետ, բան: Հայ կազմակերպութիւնը, 1904—6 թւին մի աւելի մեծ հատւած անջատուում է և հիմնում սոց. — յեղափոխական կազմակերպութիւնը և վերջապէս այժմ անջատուում են «Զախ գաշնակցականները» Պէտք է ասել, որ արդի յեղափոխութեան սկզբներից այդպիսի մի ներքին պայքար էր առաջ եկել Դաշնակցութեան ներսում սոցիալիստական տարրերի և մնացածների միջև, որը կարող էր բերել մի նոր խոշոր անջատման: Սակայն այն սպակցիքեկ պայմանները, որոնց մէջ գտնուում է հայ աշխատաւորութիւնը, ստիպում են նրան նորից կապւած մնալ եկին Դաշնակցութեան հետ, իբրև փորձւած մի ինք-

նապաշտպանութեան կազմակերպութեան հետ: «Փորձւած սատանան աւելի լաւ է—ասում է ժողովրդական առածը—քան անփորձ երեշտակը»: Ակամայից յիշում ենք մի գեպք, որը մեղ պատմեց մէկ անզամ լեռնը:

Մի հայ զինուոր հարցնում է լեռնին,

— Բժիշկ դու հինչ կուսակցութեան բաւ:

— Ես սոցիալիստ յեղափոխական եմ, ոու ինչ ես, հարց է տալիս լեռնը:

— Թեզանա հինչ ծածկեմ, ասում է զինուորը, ես էլ եմ սոցիալիստ-յեղափոխական: Ամա, մեր մէջ ասած, հիմացնենատուա Դաշնակցական լինելը:

Հասկանալի է թէ ինչու է ձեռնուու թայց և այնպէս գարձեալ տեղի ունեցաւ անջատումը: Առաջ եկան «Զախ» Դաշնակցականները:

Այսպէս ուրիմն գաշնակցական զեկափորների զտման թէօրիան, որ այսօր նորից հրապարակ է եկել „Արե թերթում, չի արդարանում հէնց իրա Դ-ն պատմութիւնովը: Եւ որքան էլ որ մենք զէմ լինենք „Զախ գաշնուկցականների“ մաքսիմալիստական ձրգումներին, ինչպէս առասարակ զէմ ենք և ամեն մի այսպէս կոչւող «Զախ» հասանքի, որը կորցրել է զիտական սոցիալիզմի նողը իր ութերի տակից, այնուամենայնիւ մեզ համար պարզէ: որ «Զախ գաշնակցականների» երեան գալը շարունակութիւնն է եկին սոցիալիստական անջատական շարժման Դաշնակցութեան մէջ:

IX

Մինչև այժմ մենք ծանօթացանք կունի այն հայեացքների հետ, որոնք պատկանում են 1904—8 թւականների շրջանին և մեծ մասամբ զրական արտայայտութիւն են գտել նրա աշխատութիւնների և յօդւածների մէջ։ Պէտք է ասել, ի հարկէ, որ բոլոր այդ հայեացքները նրա անձնական հայեացքները չեն միայն այլ ամբողջ սոցիալ-յիշափոխական հոսանքի իդէօլոգիան, որ մարմնանում էր յայտուն կերպով և. Աթարքէկեանի անձնառութեան մէջ։

1912—14 թւականներին պատկրապեմից անմիջապէս առաջ Բագրի ինտելլիգենց շրջաններում մի առանձին կենդանութիւն էր սկսելու Տեղի էին ունենում ժողովներ գեղարւեստի, հասարակուկան, գիտական և այլ խընդիրների շուրջը և այլն։ Այդ շարժման մէջ և. Աթարքէկեանը խոշոր գերէ խաղում։ Աչքի է ընկնում այդ շըշշանից նրա բանակուիը ո՞Բագրի Զայնթերի մէջ Դ. Անանունի հետ ազգային ինքնութեան և լեզի շուրջը և նրա յայտնի դասախոսութիւնը ինտելլիգենցիայի մասին, որը, եթէ չհնք սիրալում Ստարցեվը սումքի պայթիւնի հետ էր համեմատում և որը իսկապէս մի մեծ ցնցում առաջ բերեց հայ մեշչանական միջավայրում։ Ժամանակակից համաշխարհյան-

պատկրապմը յանկարծակիի է բերում ամենքին։ Բագրի հայ սոցիալիստական ինտելլիգենցիան սոցիալ-դեմոկրատական շրջանները մի տենդային աշխատանք են սկսում պատկրապմի պատճառով։ Սկսում է գաղանի ժողովների մի շրջան, ուր ըննւռում են բոլոր անցուգարձիրը, կամաւրական, գաղթականական և այլ հարցերը, և ուր մշակում է սոցիալիստների վարքի գիծը։ Աթարքէկեանը, ի հարկէ, այս ասինի մէջ ամենաակտիւ մասնակցութիւնը ունէր։

Մի առանձին և խոշոր գեր է ընկնում և. Աթարքէկեանի վրայ 1917 թ. մարտեան յիշափոխութիւնից յիտոյ։ Մենք նպատակ չունենք սակայն այստեղ կանգ առնելու նրա ամբողջ գործունէութեան վրայ առնաւրակ և մասնաւրապէս նրա կեանքի վերջին շրջանի վրայ, վերին աստիճանի բեղողաւոր և անձնազոհութեամբ լի մի շրջանի վրայ։ Ոչ հնարաւորութիւններ այդ անելու այժմ և ոչ ժամանակն դրա համար։

Այսուաենայիւ անհրաժեշտ է ծանօթանալ նրա հայեացքների հետմի քանի ինսդիրների մասին, որոնք կապւած են արդի յիշափոխութեան հետ։

Ներկայ պատկրապմի պատճառը նահամարում էր երկու խոշոր կապիտալիստական տրեսուների շահերի հա-

կադրութիւնը, Դրանք են գերմանօ-
աւստրիական և անգլօ-ֆրանսիական
կօալիցիաները, Պատերազմը առաջա-
ցը է „այն կապիտալիզմը, —առում է
նա, որ ուղաճանալով չի բաւականանում
իր հայրենիքի սահմաններով և շուկայով
և որոնում է նոր շուկաներ, նոր հո-
րիզոններ, որոնում է գործազրելու
համար իր կապիտալը կամ սպառելու
համար իր ապրանքները *):

Ենորհիւ կապիտալիզմի, մասր և
մեծ պետութիւնների կամ ժողովուրդ-
ների կատարեալ անկախութիւնը ոչ
այլ ինչ է եթէ ոչ մի ֆիկցիա: «Նը-
րանք ուզենան թէ չուզենան պէտք է
հնթարկեն կամ գերմանական կու-
նին կամ անգլիական իմպերիալիզմի
սալին:

«Տաճկահայ ժողովրդի վերաբերեալ
մեր ունեցած իզէալների խորտակումը,
մեր ազգութեան այդ հատւածի ամբողջ
տրագեդիան առաջ է եկել նրանից
հէնց, որ մենք չենք ըմբռնել այդ հա-
սարակ ճշմարտութիւնը * *):

Ելնելով այս տեսակէտից նա զըտ-
նում էր որ Անդրկովկասում ապրող
ժողովուրդները, հայ, թուրք թէ վրա-
ցի, իրենք չենք, որ պիտի տնօրինեն ի-
րենց վիճակը, այլ այս կամ այն տրե-
սուրը:

Անդրկովկասի ազգութիւնների փոխ-
յարաբերութիւնների խնդրում է. Ա-
թարէկանը կանգնած էր հետեւալ

տեսակէտի վրայ: Նա ասում էր, որ
պիտի գտնել մի այնպիսի քաղաքա-
կան ձեւ, որը հնարաւոր դարձնէր բո-
լոր Անդրկովկասեան ժողովուրդ-
ների սերտ համակենցաղը: Ահա ին-
չու նա ամենախիստ քննադատութեան
է հնթարկում Դաշնակցութեան սահ-
մանափոխութեան ծրագիրը:

«Եւրոպական մեծ պատերազմը — ա-
սում է նա — կատարում է իւր սահ-
մանափոխութիւնները և նա կը կա-
տարի նոյնպէս և մեր, Անդրկովկաս-
եան ներքին սահմանափոխութիւնը»:

Հետևապէս այդ ժողովուրդները
պէտք է միայն մշակեն այնպիսի մի
ձեւ, որը հնարաւոր է իրենց տեսա-
կէտից և հնարաւորութիւն կը տայ
ամենքին ազատ կերպով զարգանալու
տնտեսական և կուլտուրական յառա-
ջապիմութեան ձանապարհով:

Եւ Անդրկովկասի ապագայ քաղա-
քական ցանկալի ձեւ նա պատերա-
ցնում էր այսպէս, Անդրկովկասը,
իրքի մի տնտեսական միաւոր բաժան-
ում է շրջանային լայն ինքնավարու-
թիւնների: Այդ շրջանների սահման-
ները որոշում են ոչ թէ բատ այս
կամ այն ազգութեան մեծամասնու-
թեան, այլ բատ տնտեսական շահերի
ընդհանրութեան: Այսպէս, օրինակ
Գունձակի նահանգի լեռնային մասի
հայ աղքարնակութները իր տնտեսա-
կան շահերով կաղաւած է տափարակի
հետ, իսկ տափարակի թուրքութիւնը

*] «Ազիստանքի Դրոշակ» 1918 № 7:

լեռներում զտնւող հայլազների հետ-
նուրեմի այդտեղ պէտք է ստեղծւի մի-
ինքնավար շրջան:

«Իսկ կուլտուրական ինդիբների հա-
մար պիտի ստեղծել ազգային կուլ-
տուրական ինքնավարութիւններ»*):

Այս ծրագիրը սակայն Լ. Աթարէկ-
եսնի համար մերջնական չէր «Առ-
ցիալիստի համար—ասում էր նա—ոչ
մի իդէալ, իբրև մի բարացած ծրա-
գիր, գոյութիւն ունենալ չի կարող:»
Բէալիստուրէն մտածող սոցիալիստի
համար դատապարտելի են միայնգա-
մայն այնպիսի լողունգները, ինչպէս
են՝ «մաճ կամ ազատութիւն», «մաճ-
կամ աւտօնոմիա», «մաճ կամ ֆէզի-
քացիա», «մաճ կամ սահմանափախու-
թիւն», «մաճ կամ այս օրինատացիան
միայն», և այլն:

Ֆրժնտի պաշտպանութեան խըն-
դրում, նա ամենից եռանգուն պաշտ-
պանն էր այն տեսակէտի, որ հայ ժո-
ղովուրդը մենակ չըպիտի իր վրայ-
վերցնի պիտականութեան պաշտպա-
նութեան այդ ծանր լուծը, և որ նա
կարող է այդ անել միայն այն դէպ-
քում, երբ նրա հետ, կողք-կողքի կը
կուեն և միւս ժողովուրդները, վրացի,
թուրք և ամինից առաջ ուսւ ժողո-
վուրդը:

Սոցիալիստ-յեղափոխական կուսակ-
ցութեան մէջ է. Աթարէկեանը աջա-
կոզմեան էր համարում և՝ կանգնած

էր այն տեսակէտի վրայ, որ ոուսա-
կան յեղափոխութիւնը ժողովրդա-աշ-
խատաւորական յեղափոխութիւն է,
բայց ոչ սոցիալիստական և ամինա-
ուժեղ հակառակորդն էր բօլշիկոմի և
ձախ էսէրների:

Կանգնած լինելով գիտական սոցիա-
լիզմի տեսակէտի վրայ նա միանգա-
մայն ժխտում էր սոցիալիզմը իրակա-
նացնելու հարաւորութիւնը մուսաս-
տանում այժմ: Իսկ գիտական տեսա-
կէտը կայտնում է նրանում, որ սո-
ցիալիզմը, իբրև մի բարձր կուլտուրա,
կարող է յաջորդել միայն ամենաբար-
ձըր զարգացման հասած կապիտալիզ-
մին: Մինչդեռ մուսաստանում կապի-
տալիզմը զտնւում է իր զարգացման
սկզբնական աստիճանի վրայ և այն
էլ բայց այլած զրութեան մէջ պատե-
րազմի պատճառով: Զը կան տնտեսա-
պէս և հասարակականօրէն կազմակերպ
և կուլտուրապէս բարձր զասակարգեր:
Բուրժուազիան տարւած է զասակար-
գային էզօֆզմով, զուրկ է պիտակա-
նութեան զգացումից: Աշխատաւոր
ժողովուրդը ևս իր մեծամասնութեամբ
անկազմակերպ է, անզրագէտ, զասա-
կարգային զիտակցութիւնից զուրկ և
յաճախ իր զասակարգային պայքարի
ժամանակ խախտում է պիտականու-
թեան շահը և արդիւնաբեր ոյժերի
անարգել զարգացումը: Զը կան, հե-
տեւապէս, այն բոլոր օբիեկտիւ և ոու-
բիեկտիւ պայմանները, որոնք հնարա-

ուր կարող են գարձնել սոցիալիզմի աստիճանական իրականացումը, ինչպէս կամենում են ձախերը:

Եւ իր ամենախիստ քննադատութեան մէջ անգամ, որը ուզուած է դէպի ձախ հոսանքները, և Աթարէկեանը պահում էր իրեն այնպէս ինչպէս վայել է ամեն մի գիտականութէն մտածող սոցիալիստի:

«... Անթոյլաղբելի ու անվայել մի վարմունք է, —ասում է նա ձախ էսէրների մասին—մի քանի կուսակցական ների կողմից, երբ տաք պայքարի ժամանակ, ձախերի երեսին ձախութեան, պրոլիտատորութեան, փառատենչութեան, թեթևամտութեան նախատինքներն են նետում... մոռանալով, որ մասսայական լայն շարժումները չեն կարող առաջ գալ անձնական արատների... պատճառով, և եթէ նրանք այդ շարժումները կան, կան ուրիշն և նրանց առաջ բերող օրինակութիւն պատճառները: Այս այս պատճառների մերկացումով և վերացումով է, որ պիտի պարապի քննական միաբանը»:

«Մեծ փլումների և կառուցումների այս մի քանի տարին, այս յեղափոխութիւննը իւր բիւրաւոր ներճակութիւնների և ընդհարումների քաօսով աշխատաւոր ժողովրդի այս անասիլի թշուա կացութիւնը, բացատրութիւն և բաւարար ելք չը գտնելով քննական պատճառողութեան անվարժ ուղեղների

մէջ անխուսափելիօրէն պիտի տանէր դէպի հրաշքի տենչը և մեր աշքի առաջ այդ տենչը ամենից տգէտ ամենից յօդնած ժողովրդի մէջ բանաձեւեց և կազմակերպւեց իբրև բոլշևիզմ և ձախ էսէրականութիւն»:

Աթարէկեանը գտնում է, որ բոլշևիկներին և ձախ էսէրներին միացնում է ոչ թէ ծրագիրն ու աշխարհայեցողութիւնը, այլ ընդհանուր «աշխարհազգացողութիւնը»:

«Թէ բոլշևիկի և թէ ձախ էսէրի աշխարհազգացողութեան ամենահիմական տարրերից մէկը հաւատն է դէպի յեղափոխութեան հրաշքը...»

«Եյն գործը, որ ուրիշ երկինքների տակ բանուրական գասակարգային հիմարկութիւնները կատարել են երկար տասնամեակների ընթացքում արվեստից պայքարների, հալածանքների և մեծ զոհերի գննով, այդ նոյն գործը բանուրական, զինուրական և գիւղացիական խորհուրդները յեղափոխական ոռուսաստանում մի ինչ որ հրաշքով կատարել են մի քանի ամսւայնթացքը»:

«... Սրանց աշխարհազգացողութեան մի ուրիշ տարրն էլ հաւատն է դէպի անհատական ու խմբակցական ինիցիատիւը, դէպի գիտակից ու էներգիական փոքրամասնութիւնը: Այն, ինչ որ մենք, գիտականօրէն խորհուրդներու միացած անվարժ ուղեղների հնք անւանում, հնացած նախա-

պաշարումներ են սոսկ և ոչ տւելի, զիտակից, եռանդուն ու անողոք փոքրամասնութիւնը ամենակարճ ժամանակից ընթացքում կը ստեղծի այն բռնոր տւեալները, որոնք Արևմտահան Եւրոպայում առաջ են եկել երկար տասնամեակների և դարերի ընթացքում: Բաւական է միայն ձեռք բերել իշխանութիւնը... ինիցիատօրների խումբը կը կատարի և հոգի սոցիալիզացիան, և արդիւնաբերական աշխատաւորական կօնտրու կիրագործի, ... և գործարաններն ու բնակարանները կը յամացնի...» և այլն:

Դէպի գիտակից ու Էներգիական փոքրամասնութիւնը ունեցած այս հաւատի պատճառները նոյնն են, ինչ և երաշը հաւատինը: Դրանք են՝ «յուսահատութիւնը, յոգնածութիւնը, շւարածութիւնը և բուռն, շտա բուռն տենչը՝ վերջ տալու թէ այս պատերազմին և թէ ժողովրդական ծով թըշվասութիւններին»:

Այդ տեսակէտից էլ հասկանալի է դառնում „թէ ինչու, երբ բոլցիկարկան և ձախ էսէրական ինքնին մաքուր զգացումները վարակում են պուգաչովեան, քուրբային և հակառէտկան բռնտերի սովոր ամբոխներին, սրանց ջանքերն ու զործերը լինում են յորի, այլանդակ և աւերիչ»:

,,Սակայն հասկանալ այս ամենը չի նշանակում բնու անտարբեր մնալ պէտի բոլշևիստական էսէրականուր»

թիւնը... Որքան էլ մաքուր լինի նըրանց զգացողութիւնները, նրանց գործողութիւնը վտանգաւոր է ու ժողովրդակործան և այդ գործողութիւնը պիտի յաղթահսրւի ըոլոր միջոցներով... Կազմակերպելով և գիտակցութեան բերելով աշխատաւորական զանգվածները, աղատելով նրան հրաշը և փրկարար բռնութեան ծանր ճիպնոսից և որ ամենից գլխաւորն է մաքսիմալ կիրարով իրագործելով այն ամենը, ինչ որ հնարաւոր է արդի հասարակապետական պայմանների մէջ» *):

Ահա ինչպէս էր Լ. Աթարէկեանը ըմբռնում առհասարակ ձախ հոսանքը Ռուսաստանում: Այստեղ ևս նա նեղ կուսակցականութեան չափով չի մօտենում խնդրին, այլ ինչպէս միշտ, գիտական մեթոդով: Նա համարում է դա մի հասարակական շարժում, երեւոյթ, և որոնում է նրա օրինեկախ պատճառները տալիս է նրա հոգեբանական անալիզը ապա միայն իր գընահատումը, ժխտական վերաբերումը և այնուշենք արդէն ցոյց է տալիս այն ուղիղ միջոցը, որով կարելի է և պէտք է կուել նրա զէմ: Եւ որովհետեւ նա ճիշտ էր հասկանում երկոյթը նա որոշ չափով և ներող էր ձախերի վերաբերեալ: Նա նայում էր նրանց

*) Այս բոլոր ցիտատները բերում ենք Լ. Աթարէկեանի , Զախ էսէրները յօւածից. Աշխ, Դրոշ, 1917 թ. № 23:

վրայ այնպէս, ինչպէս մեծերը նայում
են անփորձ և միամիտ երեխաներին:
Հետաքրքրական է այդ տեսակէտից
նրա մի ճառը, որ նա արտասանոց
կուսակցական խորհրդի նիստերից մէ-
կում: Նա ուղղված էր ճախերի դէմ
և վերջանում էր այսպէս.

— Ես մի թոքախտով հիւանդ բան-
ւորի ընտանիքում էի մէկ անգամ:
Հայրը ապրում էր իր կեանքի վերջին
ըոսէները, իսկ երեխաները սենեակի
մի անկիւնում խաղում էին Ես զար-
ձայ երեխաներին և ասացի, «Խելօք
կացէք, երեխաներ, հայրիկը մենում
է»: Այժմ մենք ճախերին կարող ենք
ասել. «Խելօք կացէք, Ռուսաստանը
մենում է» (тише дѣти, Россія уми-
раетъ):

X

Վերջացնելով մեր այս համառօտ և
լրացումների կարօտ տեսութիւնը, մենք
կարեոր ենք համարում մի քանի խօսք
ևս ասել Լ. Աթարէկեանի մասին, իր-
ու ինտելիգենտի մասին:

Լ. Աթարէկեանը այդ տեսակէտից
իր նմանը չունէր մեր իրականութեան
մէջ: Նա ինտելիգենտ էր բառիս բուն
նշանակութեամբ և ներկայացուցիչն
էր հայ ինտելիգենցիայի այն իմաս-
տով, ինչ իմաստով հասկացում է ոռ-
ցիալ-յեղափոխ, մտածողութեան մէջ:
Հաս սոցիալ-յեղափոխական ըմբռնման
ինտելիգենտ լինել չի նշանակում ու-

ուում ունենալ, գպրոցական վկայական
կամ համալսարանական դիպլոմ ունե-
նալ: Ինտելիգենտ կարող է լինել և
բանւորը և արհեստաւորը և գիւղա-
ցին, որոնք ոչ մի գպրոցում ոչ մի
ուսում և ոչ մի դիպլոմ չեն ստացել:
Ինտելիգենտ լինել նշանակում է հաս-
կանալ և խորտակէս զգալ իր միջավայ-
րի, իր հասարակութիւն մէջ գոյու-
թիւն ունեցող կարգերի անարդարու-
թիւնները, և ձգտել նոր կատարեալ
և արդար կարգերի, աանելով իր յե-
տից շատ շատերին: Ինտելիգենտը
անհաշտ թշնամի է այն ամենի, ինչ
որ արգելը է հանգիստանում անհատի
ազատ, բազմակիրածանի և ներգաշնակ
զարգացման առաջ: Ինտելիգենտը կա-
տարեալ հակառակութիւնն է քաղքինի
մարդու, մեշտնինի, ինչպէս ուսունե-
րըն են ասում և Փիլիստերի, ինչպէս
գերժանացիներն են ասում:

Իսկ ով է մեշտնինը: Քաղքենին:
Նա, ով իր կեանքը դրել է որոշ կար-
գի և կանոնի տակ և ընդունակ չէ ոչ
մի քայլ այդ կարգից ու կանոնից այն
կողմը գնել: Որոշ ժամանակին նա վեր
է կենում, որոշ ժամին ճաշում, հան-
գուտանում և այլն:

Հանգիստ «նորմալ» կեանը վարել
առանց յուղմունքի, առանց զաղափա-
րի և պայքարի, ապրել այնպէս, ինչ-
պէս իր հայրերն են ապրել և ինչպէս
այժմ ապրում է իր նման մեծաքանակ
մեշտնութիւնը, բոլոր դէպիգերում ա-

ուանց բացառութեան վարւել այնպէս;
ինչպէս համելի կը լինի իր հարեանին,
որի կարծիքը օրէնք է իր համար—
ահա քաղքենու, մեշշանինի հոգերանու-
թիւնը: «Ասուած իմ, թնչ կասի իշ-
խանուհի Մարիա Ալեքսեինան», «Թնչ
կասեն մարդիկ» այս հարցը կանգնած
է միշտ նրա առաջ, իրքի սպանալիք:
Եւ ոչ մի քայլ նա չի կարող աներ
առանց զիտենալու, որ այդ քայլը հա-
ւանութիւն կը գանի «մարդկանց»
կողմից: Եւ նա իր մէջ խեղղում է ա-
մեն մի ինքնուրոյն միտք, ամեն մի
մաքուր զգացում, որը կարող է դա-
տապարառութեան հանգիպիլ հարեանի,
այսինքն իրեն շրջապատող մեշշաննե-
րի կողմից: Հաստատած կարգ ու
կանոնը, հնացած օրէնքներն ու ա-
ւանդութիւնները սրբութիւններ են
նրա համար: Նա զուրկ է ըննադատո-
քէն մտածելու ընդունակութիւնից և
անկարող է որևէ ընտրութիւն անել
այդ օրէնքների և սովորութիւնների
մէջ:

Ինտելիգենտը, ուսումով է նա թէ
անուսում, այդ միենոյն է, մեշշանինի,
քաղքենու կատարեալ հոկադրութիւնն
է: Նրա համար մի սրբութիւն կայ
միայն, դա ինքը ոէալ մարդ—անհատն
է: Յանուն անհատի երջանկութեան
նա քննադատում է, դատապարառում
կամ հաւանում այս կամ այն հասա-
րական կարզը, այս կամ այն օրէն-
քը, այս կամ այն սովորութիւնը; ա-

ւանդութիւնը: Եւ այն ամենը, ինչ որ
խանգարում է անհատի աղատ, բազ-
մակողմանի և ներդաշնակ զարգաց-
ման, ինտելիգենտի համար վատ է,
յետադիմական, և անարդար, իսկ այն
ամենը, ինչ նպաստում է այդ զար-
գացման լաւ է, յառաջադիմական և
արգար: Նա ձգտում է այդ պատճա-
ռով ստեղծներ այնպիսի հասարակական
կարգեր, կեանքի այնպիսի ձեեր և
պայմաններ, որոնք հնարաւոր են գար-
ձնում անհատի այդ զարգացումը: Այս-
տեղից էլ առաջ է գալիս այն, որ ին-
տելիգենտը և յեղափոխական է, գա-
ղափարի և պայքարի մարդ:

Այդպէս էր լ. Աթարէկեանը: Նա
ինտելիգենտ էր, բառիս ամենալաւ ի-
մաստով: Նա հայ մեշշանականութեան
ճանաչած անողոք թշնամին էր, եւ
նրանց, ովքեր զուրկ էին անհատակա-
նութիւնից, ինքնուրոյնութիւնից և
քննադատօքէն մտածելու և խօրապէս
զգալու ընդունակութիւնից, այն ամե-
նը, ինչ տափակ էր և գաղափարա-
զորկ նա օրգանապէս չէր կարողա-
նում տանել: Մեշշանականութիւնը իր
հերթին նրա թշնամին էր, որը չը գի-
մանտրով նրա կծու, սպանիչ քննադա-
տութեան վերագրում էր նրան յատ-
կութիւններ, որոնց նա իրօք չունէր:
«Հպարտ է նա, ասում էին—արհա-
մարհկոտ և այլն»: Այս նա հպարտ
էր, բայց նրա հպարտութիւնը քաղե-
նու հպարտութիւնը չէր, այլ իր ար-

րում մնալ այստեղ և իր տունը այս-
տեղ պաշտպանել և որ այդ ևս ինքնա-
պաշտպանութիւն է:

Գալիս է Լ. Աթարէկեանը: Ծանօ-
թանալով այդ կարծիքների հետ նա
սաստիկ յուզած մի ճառ է ասում,
որի մէջ նա նկարագրում է այն ծա-
նըր գրութիւնը, որ ստեղծւել է և կոչ
է անում թողնել այդ պահանջկուռու-
թիւնը, ինընապաշտպանութիւնը հաս-
կանալ լայն իմաստով և մանել ազգա-
ցին խօսիրդի գրութիւնը:

«Ամենը—աւելացնում է նա—պար-
տաւոր են իրենց լուման ստցնելու
ընդհանուր գործի մէջ: Մօմենոց լուրջ
է և պահանջում է մեզնից մեր բոլոր
հոգեկան և փիզիքական կարողութիւն-
ների մաքսիմալ լարումը: Մէկը պէտք
է տայ իր մտքի կորովը իսկ միւսը
իր գրչի ընդունակութիւնը, մի եր-
րորդը իր փիզիքական ոյժը, փրկելու
համար աշխատաւոր ժողովրդի Փիզի-
քական գոյութիւնը վերահաս վտան-
գից: Հարուստից պէտք է առնենք նրա
կապիտալը՝ սրբազն բռնութեան ի-
րաւունքով, ժողովրդի ծով կարիքների
համար, և թիշկի թէ փաստաբան, ար-
հաստագէտթէ զրականագէտ, ամենը,
ամբողջ ինտելեկտների պիտի լո-
րեն բոլոր իրենց ոյժերը, պիտի ցու-
ցահանեն բոլոր իրենց էներգիի մաք-
սիմունը, որպէսզի իրաւունք ունենան
ասելու, որ իրենց պարտականութիւ-

ժանաւորութիւնների գիտակցութիւ-
նը: Այս նա արհամարհող էր, բայց
արհամարհում էր այն ամենը, ինչ որ
սահմանափակ էր և մակերեսային
ինչ որ մեշչանական էր և հանգիստ
անկիւնի սիրահար:

Լ. Աթարէկեանը հայ ինտելեկտների-
այի խիղճն էր, նրա առաջնորդը: Նա
երբէք չէր թողնում մեշչանական հան-
գստութեան հեռանկարով տարւել և
ոգերում էր ամենքին պայքարի ժառ
մանակ և մխիթարում, յօյն ներշնչում
յուսահատութեան րոպէսներին: Եւ նա
միշտ հայ ինտելեկտների գլխին
կանգնած, յիշեցնում էր նրանց իրենց
պարտականութիւնների մասին: Նա
միշտ առում էր, որ ուժ շատ է տւած
նրանից էլ շատ է պահանջում: Ահա
այդ տեսակէտից մի բնորոշ գէպք:
Մարտի սկզբներին ֆրօնտի համար
բժիշկներ են պահանջում: Գումար-
ում է ինչպէս պատմում են, հայ
բժիշկների ժողով: Սկզբում Լեռնը
բացակայում է: Սկսում է կարծիք-
ների փոխանակութիւնը: Ոմանք ա-
սում են, որ հարկաւոր է գնալ Թրան
առարկում են սակայն Մէկն ասում է,
որ ինքը չի կարող գնալ և իր ընտառ
նիքը թողել անապահով գրութեան
մէջ: Եթէ ազգային խորհուրդը նիւ-
թապէս կապտառվի իրեն և իր ընտառ
նիքը այն ժամանակ միայն կարելի
կը լինի գնալ: Մի որիշը ասում է
Կոչիսկի, որ ինքը աւելի լաւ է համա-

նը ամենայն բարեխղճութեամբ կտարեցին ժողովրդի առաջք:

Նոյն խօսքերը նա յտնախ էր առում, թէ կուսակցական ժողովներում, թէ հայ զինւորների միտինքներում և թէ այլ ժողովներում:

Եւ Լ. Աթարէկեանը, որը այնպիսի հոանդով հրաւիրում էր ամենքին իրենց պարտքը կատարելու աշխատաւոր ժողովրդի առաջ, տալու այն ամենը, ինչ որ կարելի է և ինչ որ հարկաւոր է նրան, ինքը՝ իր քաղաքացիական պարտքը կատարելիս, տւեց իր ամբողջ կետնքը, մի կեանք, որ այնքան թանգ էր ամենիս համար, մանաւանդ այսպիսի մի մօմենտում, մի կեանք, որ այնքան դեռ հարկաւոր էր, որ այնքան դեռ շատ գործ ունէր անելու այդ աշխատաւոր ժողովրդի համար:



ՄԱՀԱԳԻՒԹԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



MAL008067

